Azg
Ազգ
23 ՕԳՈՍՏՈՍ 2008 ՇԱԲԱԹ 152 (4046)

Բենզինի տուկան կկայունանա 3-4 օրվա ընթացքում

Կարեւորվում է արտաքին աշխարհ դուրս գալու իրական ուղղությունը

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Վրաստանում կածրջի պայթյունը եւ երկաթուղային կամի ընդհատումն արտաքին աշխարհի հետ մեզ հիշեցրին 90-ական թվականները, երբ նման միջադեպերը սովորական էին դարձել մեր հարեւան Վրաստանով անցնող գազատարի, երկաթուղու, կամուրջների համար: Այնքան սովորական, որ երբ հերթական անգամ կրճատվում էր գրաֆիկով տվող հոսանքը, կանխավ գիտեին, որ Վրաստանի տարածով Հայաստան մտնող գազատարն է պայթեցվել: Իսկ որ այն ժամանակվա ՀՀՇ-ական իշխանությունները ցանկություն եւ կարողություն չունեին ենթադրելու էլեկտրաէներգիան առյուծավետ բաշխելու, թերեւ բոլոր են զգացել: Իրավիճակն այժմ այլ է:

Վրաստանի տարածում տեղի ունեցող միջադեպերն անշուշտ չեն դադարում ազդել Հայաստանի տնտեսական իրավիճակի վրա, բայց այդ ազդեցությունը ոչ մի կերպ չի կարելի համեմատել 90-ականների իրավիճակի հետ: Եվ դա նախ եւ առաջ շնորհիվ այն բանի, որ վերջին մի քանի տարիներին լուրջ քայլեր են արվել երկրի էներգետիկ անվտանգությունն էապես բարձրացնելու առումով: Դա եւ Իրան-Հայաստան գազամուղի կառուցումն է, եւ գազաֆիկացման ընդլայնումը, եւ փոքր ՀԷԿ-երի կառուցումը, եւ բաշխիչ ցանցերի աշխատանքի արդյունավետության բարձրացումը, եւ վառելիքի ներմուծման այլընտրանային ճանապարհների գործարկումը:

Տես էջ 2

Փորձել են պայթեցնել Վրաստանը Հայաստանի հետ կապող կամուրջը

Անհայտ անձինք Վրաստանի Մառնեուլիի շրջանում փորձել են պայթեցնել երկաթուղային կամուրջը, որը երկիրը կապում է Հայաստանի հետ:

Ինչպես լրագրողներին հայտնել է Քվեմո Քարթլիի տարածաշրջանի նահանգապետ Դավիթ Կիրկիտաձեն, ուշքաթ լուսաբացին գործի է դրվել պայթուցիկ սարք՝ ենթադրաբար հակատանկային ական, որը դրված է եղել կամրջի հենասյուներից մեկի տակ: Սակայն պայթյունը լուրջ վնաս չի հասցրել:

Նահանգապետը հայտնել է, որ պայթյունի փաստով հետաքննություն է սկսվել, հաղորդում է Առնենպրեսը:

ՀԱՄԱՌՈՏ

Պայթյուն Բաքվում, կան զոհեր

Բաքվի Խաթաինյան շրջանի տարածքում տեղի ունեցած պայթյունի հետեւանքով զոհվել է երկու եւ վիրավորվել երեք մարդ: Իրավապահ մարմինները հայտնել են, որ պայթյունը որոգայթել է էլեկտրական տրանսֆորմատորի տեղամասում: Բաքու խաղաղի դատախազության տեղեկությունների համաձայն, պայթյունը տեղի է ունեցել տեղամասում դրված պայթուցիկ սարքի գործարկումից: Իրավապահ մարմինների աշխատակիցները դեռեւս վայրում սկսել են հետաքննությունը: Հիշեցնենք, որ օգոստոսի 17-ին Բաքվի Նարիմանովի շրջանի տարածքում գտնվող Սբու-Բեր մզկիթում տեղի ունեցած պայթյունի հետեւանքով երկու մարդ զոհվել էր, 19 վիրավորվել էր, հաղորդում է «Նոյյան տապանը»:

Ռուսական զորքերը հեռացել են Գորիից

Ռուսական զորքերը հեռացել են վրացական Գորի խաղաղից եւ նրա շրջակայքից: Այս մասին «Ռուսթավի-2»-ի եթերում հայտնել է Վրաստանի անվտանգության խորհրդի քարտուղար Կախա Լոմայան: Նշվում է նաեւ, որ ռուս զինվորականները հանել են Թբիլիսիից 35 կմ հեռավորությամբ գտնվող ամենամոտ պահակակետը Իգոետիում, Կենտրոնական վրացական մայրուղին ազատ է, մեքենաներն այլեւս սուգման չեն ենթարկվում, հաղորդում է «Նոյյան տապանը»:

Աբխազիայում կտեղաբաշխվի 2 հազար խաղաղապահ

Խաղաղապահների ռուսական զորակազմն Աբխազիայում բաղկացած կլինի 2142 զինծառայողներից, Հարավային Օսիայի խաղաղապահների թվախանակը դեռ որոշված չէ: Այս մասին հայտարարել է ՌԴ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի տեղակալ, գեներալ-գնդապետ Անատոլի Նոգովիցինը: «Խաղաղարարական պահակակետերում կեռապետն 272 զինծառայողներ առաջին գծում, 180-ը՝ երկրորդ», ասել է Նոգովիցինը:

Վախճանվեց Մերգեյ Մերգելյանը

Երկարատեւ հիվանդությունից հետո Լոս Անջելեսում օգոստոսի 20-ին վախճանվել է ականավոր գիտնական, ակադեմիկոս Սերգեյ Մերգելյանը: Գիտությունների ազգային ակադեմիան եւ Գիտության պետական կոմիտեն իրենց վշտակցությունն են հայտնել անվանի գիտնականի մահվան կապակցությամբ՝ նրա մահը համարելով անդառնալի կորուստ ողջ հայ ժողովրդի եւ առաջին հերթին Հայաստանի գիտական հանրության եւ մասնավորապես հայ մասնագետների համար: Ս. Մերգելյանը ծնվել է 1928-ին: Էքստեռն ավարտելով ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը՝ նա 19 տարեկանից ակտիվորեն մուտք է գործում ստեղծագործական աշխատանքի հորիզոն: 21 տարեկան հասակում Մերգելյանը դառնում է գիտությունների դոկտոր, 25 տարեկանում ընտրվում ԽՍՀՄ եւ ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, իսկ 28 տարեկանում՝ Հայաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս: Անցյալ դարի 50-ականներին Սերգեյ Մերգելյանն Հայաստանում ստեղծում է կիրառական մաթեմատիկայի եւ հաշվողական տեխնիկայի գիտատեխնոլոգիական նոր ուղղություն, որը մեծ համբավ բերեց Հայաստանին: Նրա ղեկավարությամբ կազմակերպվել է մաթեմատիկական մեքենաների երեւանի գիտահետազոտական ինստիտուտը, իսկ հետագայում՝ նաեւ արտադրական ձեռնարկություններ, սկսվել է ժամանակակից հաշվողական մեքենաների արտադրությունը: Շնորհիվ ակադեմիկոս Մերգելյանի գիտակազմակերպական տաղանդի՝ Հայաստանը դարձավ այդ ուղղությամբ ԽՍՀՄ հիմնական կենտրոններից մեկը: Ակադեմիկոս Մերգելյանը եղել է Գիտությունների ակադեմիայի փոխպրեզիդենտը, Գիտությունների ակադեմիայի եւ ԵՊՀ-ի հաշվողական կենտրոնի հիմնադիրն ու առաջին տնօրենը, ԵՊՀ ամբիոնի վարիչ: Սերգեյ Մերգելյանը եղել է նաեւ ԽՍՀՄ ԳԱ Սեկցիոնի անդ. Մաթեմատիկայի ինստիտուտի կոմպլեքս անալիզի բաժնի հիմնադիրը եւ ղեկավարը: Սերգեյ Մերգելյանի ծառայությունները ըստ արժանվույն գնահատվել են նաեւ անկախ Հայաստանի կառավարության կողմից. 2008 թ. նա արժանացավ հանրապետության բարձրագույն պարգեւին՝ Մեսրոպ Մաշտոցի շքանշանի:

Ջհանգիրյանի վերաբերյալ քրեական գործն ուղարկվել է դատարան

Հատուկ քննչական ծառայությունում ավարտվել է գլխավոր դատախազի նախկին տեղակալ Գագիկ Ջհանգիրյանի վերաբերյալ քրեական գործի նախաքննությունը: Գ. Ջհանգիրյանը մեղադրվում է քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով՝ իշխանության ներկայացուցիչ ՀՀ ոստիկանության ԿՊԴՊ գլխավոր վարչության աշխատակիցների նկատմամբ կյանքի եւ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու մեջ: Ըստ հատուկ քննչական ծառայության պետի մամուլի քարտուղար Վահե Կոստանդյանի, օգոստոսի 22-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ ըստ էության քննելու:

Իրանի տարածքով Հայաստան են ներկրվել ալյուր եւ վառելանյութ

Փոթիի նավահանգստում այսօրվանից վերականգնվել է նավերի բեռնաթափումը, ինչը դադարեցվել էր օգոստոսի 19-ից: Ըստ Առնենպրեսի, Փոթիում դատարկվող հայկական բեռների շարժ չի նկատվում դեպի Գորի-Թբիլիսի երկաթգծի՝ Գորիից 40 կիլոմետր դեպի Թբիլիսի գտնվող մասամբ ավերված կամուրջը: Դա նոյտակահարմար չէ այդ կամրջի համար այլընտրանային համարվող կամրջի շահագործման վերաբերյալ դեռեւս անհրաժեշտ համաձայնություններ ձեռք բերված չլինելու պատճառով: Ավերված կամրջի մոտ Հայաստան տեղափոխման են սպասում 107 վագոն ցորեն, 10 վագոն վառելանյութ եւ 50 վագոն խառն ապրանքներ, նույնիսկ, որքան եւ օգոստոսի 21-ին: Բաթումում բեռնված 37 ավտոմեքենաներից կազմված շարասյունը երեկ սահմանված կարգով բարեհաջող անցել է Բավրայի մաքսային անցակետը: Այդ մեքենաները Հայաստան են տեղափոխում 517 հազար լիտր բենզին: Վառելանյութը մասնավոր է եւ տեղափոխվում է «Սոյավեն» բեռնափոխադրումներ իրականացնող ընկերության կողմից՝ պետական օժանդակությամբ: Հաղորդվում է, որ Հայաստան են հասցվել նաեւ Իրանի տարածքով տեղափոխվող բեռները: Օգոստոսի 21-ին Մեղրի ուղարկված 38 մեքենաները տեղափոխում են 10 վագոն ալյուր, 19 վագոն բենզին եւ 4 վագոն դիզվառելիք:

Հայաստանում այս տարի գրանցվել է 35 երկրաշարժ

Հայաստանում այս տարի գրանցվել է 35 երկրաշարժ: Հանրապետությունում սեյսմիկ իրավիճակը հսկվում է 14 գեոդեզիական եւ 150 մոնիտորինգային կայաններից բաղկացած ազգային դիտացանցով: Ամենաուժեղ երկրաշարժերը (3,4 մագնիտուդ, որը հավասարազոր է 4 բալի) տեղի են ունեցել աprիլի 24-ին եւ հունիսի 20-ին: Առաջինի ուժգնությունը զգացվել է Աշոցքից 7 կմ հյուսիս-արեւելք ընկած Զուգաղբյուրում եւ Բավրայում, երկրորդինը՝ Նոյեմբերյանից 15 կմ հարավ-արեւելք՝ Իջեւանում եւ Բերդում: Հաջորդ՝ ավելի թույլ երկրաշարժը տեղի է ունեցել աprիլի 18-ին Գառնիից 8 կմ հարավ-արեւելք՝ 3,3 մագնիտուդով՝ հավասարազոր 3 բալի, որի ուժգնությունը զգացվել է Երեւանում, իսկ փետրվարի 13-ին Սոթքում գրանցվել է 2,6 մագնիտուդով՝ հավասարազոր 3 բալի, երկրաշարժ: Ինչպես Առնենպրեսին ասաց ՀՀ սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության պետ, պրոֆեսոր Ալվարդ Անտոնյանը, չնայած երկրաշարժերի քանակը նախորդ տարիների համեմատությամբ ցածր է, սակայն Հայաստանի տարածքում եւ նրա հարակից շրջաններում կա էներգիայի դեֆիցիտ, որը հավանաբար լրանա 5,5- 6 մագնիտուդի հասնող երկրաշարժով:

Ռուսաստան-ՆԱՏՕ համագործակցություն չիք

Ռուսաստանը գործում է, իսկ Վրաստանը հույսով նայում է լայն իմաստով Արեւմուտքին

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ռուսաստանը հայտարարել է ՆԱՏՕ-ի անդամ երկրների հետ ռազմական համագործակցության ժամանակավոր դադարեցման մասին: ՆԱՏՕ-ում Ռուսաստանի մշտական ներկայացուցիչ Դմիտրի Ռոգոզինը հրաժարվել է մեկնաբանել Ռուսաստանի նման որոշումը, պատճառաբանելով, որ այս երկու օրվա ընթացքում Մոսկվայում տեղի կունենան խորհրդատվական հանդիպումներ ու քննարկումներ, հետո կիսակցվեն համագործակցության բնույթն ու շարունակությունը ՆԱՏՕ-Ռուսաստան ձեւաչափով:

Դեռեւս անցյալ շաբաթ ստեղծված իրավիճակում Ռուսաստանի հետ համագործակցության անհնարինության մասին հայտարարեցին ՆԱՏՕ-ի անդամ 26 երկրների արտգործնախարարները: ՆԱՏՕ-ում ԱՄՆ ներկայացուցիչն, իր հերթին, բարձրաձայնել է, որ մինչեւ Վրաստանում իրավիճակի հանգուցալուծումը, որեւէ կերպ չեն պատկերացնում համագործակցությունը Ռուսաստանի հետ: Դաշինքի այս մոտեցումը հիմնականում պատճառաբանվում է այն հանգամանքով, թե Ռուսաստանը, համաձայն եռակողմ ռուս-ֆրանս-վրացական համաձայնության, չի կատարում իր խոստումը՝ ռուսական զինուժի միավորումները մինչեւ օգոստոսի 7-ի դրությանը վերադարձնելու առնչությամբ:

Եվ մինչ գերտերությունները հարաբերություններ են պարզում, ռազմական գործողությունների, զինուժի տեղաշարժման ու հարավօսական հակամարտության գոտում տիրող իրավիճակի մասին տարաբնույթ, իրարամերժ տեղեկատվություն է տարածվում: Վրացական «Ռուսթավի-2» հեռուստաընկերությունը տեղեկացրել է երեկ, որ Հարավային Վրաստանում գտնվող արդբեջանական Մառնեուլիի շրջանում պայթեցվել է երկաթգծային կամուրջ, որ, սակայն, լուրջ վնասներով չի առանձնացել երկաթգծային հաղորդակցության համար, թեեւ մտավախություն կա, որ ակամարտված կարող են լինել ուրիշ հասվածներ:

Տես էջ 5

Ընթացիկ

Վաշինգտոնը նախատես զգուշացրել է Սաակաշվիլուն զերծ մնալ պատերազմից

Սակայն Ռուսաստանը, ըստ ամերիկյան դեսպանի, նրան այլընտրանք չի թողել

Հարավօսական պատերազմը կտրուկ տրեց ռազմաքաղաքական իրավիճակի լարվածությունը Հարավային Կովկասում: Դե ֆակտո մասնատված Վրաստանը կանգնեց դե յուրե մասնատման փաստի առջև: Դանով ավելի ակնհայտ դարձավ ազգերի ինքնորոշման իրավունքի գերակայությունը «ազգային» պետությունների տարածային ամբողջականության նկատմամբ: Կտրուկ սրվեց Հարավային Կովկասում հանուն ազդեցության ծավալվող ռուս-ամերիկյան անհաշտ մրցապայքարը: Հարավօսական 5-օրյա պատերազմում Վրաստանի ջախջախիչ պարտության հետեւանքով անանախադեպ հզորացան Ռուսաստանի դիրքերը տարածաշրջանում: Նա ոչ միայն տիրեց նախաձեռնությանը, այլեւ հաստատեց գործողությունների արձագանքեց ԱՄՆ-ի, Եվրոմիության եւ ՆԱՏՕ-ի ձեռնարկումներին եւ կարողացավ իր օգտին փոխել ուժերի հավասարակշռությունը ինչպես Վրաստանում, այնպես էլ Հարավային Կովկասում:

Թեեւ այս ամենի շնորհիվ անանախադեպ ուժեղացավ ռուսական գործոնի ազդեցությունը հատաբխարհային հաղթականության բաշխարքում, սակայն դրանով վերստին ուժեղացին Արեւելյան-Արեւմտյան հակասությունները եւ իրատեսական դարձավ նոր «սառը պատերազմի» բռնկման հավանականությունը: Քաղաքական այս զարգացումներն իրականում բարենպաստ չեն Հարավային Կովկասի հանրապետությունների, հարեւան երկրների, ԱՄՆ-ի գլխավորությամբ Արեւմտյան եւ նույնիսկ Ռուսաստանի համար:

Ստեղծված իրավիճակում Վրաստանին առաջին հերթին պետք է հուզի երկրի մասնատման խորացումը, Ադրբեջանին՝ «ազգային» պետությունների տարածային ամբողջականության նկատմամբ ազգերի ինքնորոշման իրավունքի գերակայությունը, Հայաստանին՝ ռազմաքաղաքական իրավիճակի լարվածության կտրուկ սուրը Հարավային Կովկասում, Թուրքիային՝ «սառը պատերազմի» բռնկման հավանականությունը այն առումով, որ նա արդեն հայտնվել է Արեւելյան-Արեւմտյան հակասությունների կիզակետում, իսկ Ռուսաստանին՝ ԱՄՆ-ի, ԵՄ-ի եւ ՆԱՏՕ-ի հակազդեցությունը:

Ինչ վերաբերում է ԱՄՆ-ին, ապա նրա համար էլ պետք է խիստ մտահոգիչ լինի Հարավային Կովկասում ուժերի հավասարակշռության հզոր Ռուսաստանի փոփոխությունը, վերջինիս ճնշման տակ այնտեղ աղաղական նախաձեռնությունը լիարժեք կորցնելու վտանգը եւ հատաբխարհային աղաղականության մեջ ռուսական գործոնի ազդեցության ուժեղացումը: Թերեւս այս ամենի առումով պատահական չէ Նորվեգիայում ԱՄՆ-ի դեսպան Կոուրս Ուոլթերի օգոստոսի 21-ին Օսլոյում արած հայտարարությունը: Դրա մասին կայքէջում «Կովկասյան ճգնաժամի հետեւանքը» վերնագրով տեղեկացրել է թուրքական հանրային հեռուստատեսությունը եւ նշել, «Պարզվում է, ամերիկյան վարչակազմը վրաց առաջնորդ Միխեիլ Սաակաշվիլուն զգուշացրել է զերծ մնալ Հարավային Օսիայի վրա հարձակվելու մտադրությունից»:

Ըստ թուրքական հեռուստատեսության, դեսպան Ուոլթերը ելույթ է ունեցել Օսլոյում կազմակերպված կոնֆերանսում եւ մասնավորապես ասել է. «Վրացական զորերի Հարավային Օսիա մերխուժումից մեկ օր առաջ, օգոստոսի 7-ի նախօրյակին, զգուշացրել ենք նրանց եւ ասել, «Այդպիսի բան չանեք: Մի՛ ներքաշվեք պատերազմի մեջ»: Ռուսաստանը պատեհ առիթի էր սպասում եւ Վրաստանն այդ խլելով նրան առիթ տվեց»:

Թերեւս կարելի էր հավատալ Նորվեգիայում ԱՄՆ դեսպան Ուոլթերի խոսքերին, եթե նա վերջում չասեր. «Վրացիների վրա մեծ ճնշում էր գործադրվում, սեփական գործողությունների դիմեցին, ինչը Ռուսաստանի համար պատրվակ դարձավ, որպեսզի 20 հազարանոց զորքով անցնի հակահարձակման», կամ գոնե նշեր, թե ովքեր էին ճնշում գործադրողները: Թեեւ նա անդրադարձավ է թողնում այս հարցերը, սակայն նրա խոսքերի տրամաբանությունը հուշում է, որ հակահարվածի համար պատեհ առիթ որոնող Ռուսաստանը իբր այլընտրանք չի թողել Վրաստանին, քան Հարավային Օսիայի վրա հարձակվելը: Այլ կերպ, ԱՄՆ-ի դեսպան Ուոլթերը նախապատրաստել է թողնում այս հարցերը, սակայն նրա խոսքերի տրամաբանությունը հուշում է, որ հակահարվածի համար պատեհ առիթ որոնող Ռուսաստանը իբր այլընտրանք չի թողել Վրաստանին, քան Հարավային Օսիայի վրա հարձակվելը: Այլ կերպ, ԱՄՆ-ի դեսպան Ուոլթերը նախապատրաստել է թողնում Սաակաշվիլուն զգուշացնելու մասին հայտարարությամբ նախ առարկություն է ամերիկյան վարչակազմի աջակցությունը վերջինին, ապա եւ հարավօսական պատերազմի պատասխանատվությունը Ռուսաստանի վրա բարդելու համար ռուսներին մեղադրում է Վրաստանին հակահարված տալու համար պատեհ առիթ որոնելու մեջ:

Հ. ՅԱՍԱՐՅԱՆ

Բենզինի տուկան կկայունանա 3-4 օրվա ընթացքում

1-ին էջից

Այս օրերին դարձյալ բենզինի որոնակի պակասություն է զգացվում: Բենզալցակայաններում կամ խոհուտ են տալիս հաջորդ օրը գալ, կամ սահմանափակ քանակությամբ են բենզին վաճառում: Հարեւան երկրում գտնվող, Հայաստանի համար նախատեսված վառելիքը դժվարությամբ է հասնում մեր երկիր: Այս առնչությամբ մեր հարցերին պատասխանելով, վառելիքի ներմուծող խոշորագույն՝ «Ֆլեթ» ընկերության փոխնախագահ **Մուսեղ Էլյանը** հայտնեց, որ ներկայումս Վրաստանում է գտնվում մոտ 1500 տոննա բենզին, որից մոտ 700-800 տոննան աջայժմ Բաթումի տերմինալում է: Որոնակի խմբաքանակ երեկ Բավրայի անցակետով մտել է Հայաստան: Մուսեղ Էլյանը հիշեցրեց նաեւ կառավարության ջանքերով Իրանի տարածքով Հայաստանի բեռները բերելը, սակայն դժվարացավ ասել, թե իր ներկայացրած ընկերությանը որքան չափաքանակ կտրվի:

«Ֆլեթի» փոխնախագահը հայտնեց, որ ընկերությունը նաեւ պայմանագիր է կնքել Թուրքմենստանից Իրանի տարածքով բենզին ներմուծելու համար: 1-2 շաբաթ հետո արդեն այս ճանապարհով նույնպես բենզին կներմուծվի: Արդեն մի քանի օր «Ֆլեթը» Իրանի տարածքով դիզելային վառելիք է ներմուծում Թուրքմենստանից:

Մուսեղ Էլյանը նաեւ նշեց, որ երկրորդ փոխարեն ավտոմեքենաներով տեղափոխվող բենզինն ավելի քանակ է արժենում: Սակայն նա հավանական համարեց, որ բենզինի գնի բարձրացում տեղի չի ունենա, քանի որ միջազգային շուկայում վառելիքի գները վերջերս անկում են արձանագրել: Թեեւ մեկ օր առաջ նավթի գները դարձյալ որոշ աճ արձանագրեցին, բայց «Ֆլեթի» փոխնախագահը հավաստեցրեց, դա դեռեւս չի ազդի մեր շուկայի վրա: Ամփոփելով, մեր զրուցակիցը ասաց, որ ամենաուշը 3-4 օրվա ընթացքում բենզինի շուկան կկայունանա եւ հավաստիացրեց, որ ամեն դեպքում այս կամ այն ճանապարհով բենզին ներմուծելու են, հանրապետությունն առանց բենզինի չի մնա:

Այդուհանդերձ, նկատի ունենալով Վրաստանի իրավիճակի անկախատեսելիությունը, չի բացառվում, որ առաջիկայում խնդիրներ առաջանան ոչ միայն բենզինի կամ դիզվառելիքի, այլեւ գազի մատակարարման հետ: Նման խնդիր արդեն իսկ առաջացավ օսական ճգնաժամի առաջին օրը: Այս դեպքում խիստ կարեւորվում է Իրան-Հայաստան գազամուղի օր առաջ վերջնական գործարկելը: Ինչպես հայտնի է, «Հայռուսգազարդն» այժմ շինարարական աշխատանքներ է կատարում գազամուղի Քաջարան-Առարատ հատվածի վրա, որոնք թարգվում են ավարտվել մինչեւ այս տարվա վերջը: Անհրաժեշտ է, որ այդ աշխատանքները ավարտվեն մինչեւ ձմռան սկսվելը: Թեեւ վերջին տարիներին գազամատակարարման դադարեցման ժամանակ Հայաստանը էներգետիկ լուրջ ճգնաժամի մեջ չի հայտնվել, իսկ ատոմակայանի ժամանակավոր կանգնեցումները ընդհանրապես բնակչությունը չի զգացել, այնուամենայնիվ, Իրան-Հայաստան գազամուղի դերը խիստ կարեւորվում է: եվ ընդհանրապես, այն պայմաններում, երբ Հայաստանի 4 հարեւաններից երկուսի ճանապարհները փակ են մեզ համար, Թուրքիայի հետ սահմանը բացելու մասին անընդհատ խոսելու փոխարեն եւ մինչ դրա իրականությունն դառնալը հարկ է առավելագույնս նպատակային օգտագործել մնացած երկու հարեւանների ճանապարհները: Այս առումով կարեւորվում է նաեւ իրանական ուղղությունը, որն այժմ Հայաստանի իշխանություններն ու մասնավոր ընկերությունները ձգտում են զարգացնել:

ՍՈՒՐԵՐՈՒ

Վայոց ձորում մեծ սպասելիքներ ունեն ՀՀ կառավարության արտագնա նիստից

Երեկ տարածքային կառավարման նախարարությունում մամուլի ասուլիսի էր հրավիրվել Վայոց ձորի մարզպետ Վարդգես Մաթեւոսյանը: Մեկ տարի առդեն մարզպետը ղեկավարում է Վայոց ձորի տարածաշրջանը, եւ ամենակարեւոր խնդիրները, որ լուծվել են իր պատասխանավորման ընթացքում, կապված են եղել դպրոցաշինության, առողջապահական օբյեկտների հիմնանորոգման, ջրամատակարարման եւ կոյուղու համակարգերի վերականգնման, ոռոգման ջրագծերի կառուցման հետ:

55900 բնակչություն ունեցող մարզում 2008-ի գարնանը կատարվել է 2576 հա հացահատիկային մշակաբույսերի ցանք: Մշակաբույսերի սնուցման համար մարզ է ներկրվել 500 տ ազոտական պարարտանյութ, որը տուկայականից ցածր գներով տրվել է գյուղացիական տնտեսություններին:

Մարզում տարեկան արտադրվում է 2000 տոննա հացահատիկ, 6500 տ բանջարեղեն, 6000 տ պտուղ, 3000 տոննա խաղող (մարզպետի խոսքերով, խաղողի մթերման խնդիր Վայոց ձորում չկա), 22 հազ. տոննա կաթ, 3000 տոննա միս եւ այլն: Վերջին 4-5 տարիների ընթացքում հիմնվել են 700 հա բազմամյա տնկարկներ (խաղող, պտուղ): Մարզի 17 համայնքներ ընդգրկվել են գյուղացիական տնտեսությունների սուբսիդավորման ծրագրում, որի հաշվարկային գումարը կազմում է 71 մլն դրամ:

Մարզպետի մատուցմամբ՝ Վայոց ձորում չեն գործում ոռոգման ոռոգակայանները: Կառավարության աջակցությամբ կառուցվել են Եղեգիս-Աղավնաձոր-Ելփին եւ Կեչուտ-Ազատեկ-Փոռ ոռոգման հիմնահոս ջրագծերը, որոնց շնորհիվ տարեկան 7000 հա ոռոգվում է:

2007-08-ի գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերով իրականացվել է եւ իրականացվում է մարզի 4 համայնքների ոռոգման ջրագծերի ներքին ցանցերի կառուցումը (301630 մլն դրամ): Նույն ծրագրով իրականացվել են 221, 4 մլն դրամի գազաֆիկացման շինմոնտաժային աշխատանքներ:

Ընթացիկ տարում նախատեսված են 1.074.9 հազ. դրամի ճանապարհաշինական աշխատանքներ: 2008-09-ին կկառուցվի Ցերմուկ-Կեչուտ ճանապարհը, կվերանորոգվի Ջախափ-Ցերմուկ ճանապարհը (446 մլն դրամ): 291 մլն դրամ է հատկացվել ավտոճանապարհների ճմռանային ոստիկանության եւ բահագործման նպատակով:

Մարզի արդյունաբերական ձեռնարկությունները, որոնց գերակշռող մասը կազմում են գինեգործությունը եւ հանքային ջրերի շշալցումը, տարեկան թողարկում են շուրջ 5 միլիարդ դրամի արտադրանք:

2008-ի պետական բյուջեից շուրջ 1.2 մլրդ դրամ է հատկացվել դպրոցական շենքերի, առողջապահական օբյեկտների հիմնանորոգման, ջրամատակարարման եւ կոյուղու համակարգերի վերականգնման, ոռոգման ջրագծերի կառուցման համար: Նմանատիպ ծրագրեր են իրականացվում նաեւ «Դ-Տելեկոմ» ընկերության բարեգործությամբ (220.0 մլն դրամ), ԱՄՆ «Հայ կրթական հիմնարկություն» հիմնադրամի հատկացրած միջոցներով (11.4 մլն դրամ):

Վայոց ձորում մեծ սպասելիքներ ունեն սեպտեմբերին մարզում կայանալիք ՀՀ կառավարության արտագնա նիստից: Նիստում քննարկվելու են Գյադիկվանք-Եղեգնաձոր խմելու ջրագծի կառուցման, փոքր եւ միջին բիզնեսի ներդրումային ծրագրերի իրականացման, մարզի տարբեր համայնքներում չորրորդ եւ հինգերորդ կարգի վթարային 177 շենքերի խնդրին լուծում տալու, ինչպես նաեւ Մարտիրոս եւ Ցիվա գյուղերի սողանքային երեւույթների ուսումնասիրման եւ խնդրին լուծում տալու հարցերը:

Վայոց ձորի հիմնախնդիրներից մեկն էլ գյուղատնտեսական մթերքներ վերամշակող ձեռնարկություններ չունենալն է: Այդ կապակցությամբ ՀՀ կառավարությունն են ներկայացվել 12 գործարար ներդրումային ծրագրեր:

ՆԱՐԻՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության օրենք
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱՎԵՐԻՆ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱՎՈՐԵԱՆ / հեռ 529221
Հասցեատերերին (գովազդ) / հեռ 582960
Լուսագրների սենյակ / հեռ 581841
Հաշվարար ծառայություն / հեռ 582483
Շտաբային լուսանկարչություն / հեռ 529353
Համակարգչային սարքերը «Ազգ»-ի թերթի
Թերթի նյութերի ամբողջական կամ մասնակի արտադրումները տպագիր ձեւերով կամ ռադիոհեռարձակությամբ առանց խմբագրության գրավոր համաձայնության խստիվ արգելվում են: հեղինակային իրավունքի մասին օրենք:
Նյութերը չեն գրախոսվում ու չեն վերադարձվում
Գ տարով յուրաքանչյուր գովազդային են, որոնց բովանդակության համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Գագիկ Շամշյանը՝ հիմը բերանում

Մարտի 1-2-ի իրադարձությունները մնում հանձնաժողովը երեկ լսում էր «Զորոցի իշխանություն» թերթի խմբագրական Գագիկ Շամշյանին եւ լրագրող Գոհար Վեզիրյանին, որոնց մարտի 1-ի առավոտյան իրադարձությունների ականատեսներ են։ Սա արվել էր մարտի 1-ի առավոտյան իրադարձությունները ոստիկանության ժամանակագրական առումով վերականգնելու համար։ Չգիտեմ՝ հանձնաժողովի անդամներին դա ինչ-որ բան տվեց, թե՞ ոչ, բայց մենք ինքներս այս անգամ մեկնաբանություններից զերծ մնում եւ ներկայացնում ենք հայկարծես Գ. Շամշյանի ոստիմաններից որոշ հատվածներ, հանձնաժողովի անդամներ հանձնաժողովի մեկնաբանություններն իրենց լսածի մասին երեքշաբթի օրվա նիստում լսելու ակնկալիքով։ Ահա Գագիկ Շամշյանի խոսքից դրվագներ՝ օրիգինալն ինչպես որ կա։

Մինչ «Ազատության» հրադադարակ մտնելը Շամշյանը առավոտյան ժամը 6-ին գնացել է Խնկո-Ապոր գրադարանի մոտ գտնվող ընկերոջ տուն՝ սուրճ խմելու։ 6:20-ին եկել է «Ազատության» հրադարակ ու կադրեր է արել, դեռ խաղաղ է եղել, մթնշաղ։ «6:25 -6:30-ի սահմաններում արդեն աղմուկ՝ որ զորքը գալիս ա։ Հյուսիսային ոստոստան որ կա՝ առարատը վերցրեցի, ոտներիս դուրս եմ էկել, ու զինվորներն են շարված, ու էդ ամբողջ բանը սկսեցի նկարել էդ օդերայի։ Ընենց նկարելով, կադրեր անելով, ընենց էկա, հասա օդերայի մոտ՝ որ ոստոստակ ա, ֆոռացի- էկա Սայաթ-Նովա, Սայաթ-Նովայից իջա դեռի Խնկո-Ապոր գրադարանի մոտով-դիմացով մտա օդերա. ընդեղ արդեն միլիցիոներներ կային, ընձի ճանաչում էին, որ լրագրող եմ, չէի էլ ներկայանում, էկա մտա ընդեղ ու սկսեցի կադրեր անել. կադր եմ արել, որ դիմակավոր անձը վանը կտում ա՝ ոստաստկի լարը, որ կտում ա՝ էդ նկարել եմ, ոստաստկեն բան եղավ ու մի խանի հոգի՝ 12-13 հոգի, կեսը դիմակավորված, կեսն առանց դիմակի, հարձակվեցին միանգամից ոստաստկի վրեն ու սկսեցին խփել. անմարդկային ձեւով սկսեցին հարվածել, ոտերով, սեռական բնույթի հայհոյանքներ տալով։ Ժողովուրդն էլ էր հայհոյում, իրականը ոտի ասեմ, մի հատ մարդ, հայհոյանքներ տալով «վախ մորս արեւ՝ գլուխս, գլուխս», ու փախավ դեռի Խնկո-Ապոր գրադարանի կողմը. ես էլ իրա հետեւից գնացի՝ հասեց՝ այդ ոստիի ժամը ֆիխելու համար։

«Ժամը 7-ին 25 կամ 20 ոստակաս էր»։

Հովհաննես Մարգարյանի կասկածին, թե վանը նկարելու եւ հետո ասած ժամերը չեն բռնում՝ Շամշյանը ոստասխանեց, թե բոլոր կադրերի վրա ժամանակ կա ֆիխված։ Միանգամից ասենք՝ այդ կադրերը Շամշյանը չներկայացրեց։ Երբ նրան ցնցել են, ձեռնաշղթաներ հագցրել եւ դեմքի վրա ոստակած երկար ոստիկ՝ նա ատարաշի չիրը ոստիաած է եղել բերանում (բա) եւ հետո ոստիկանությունում այն փոխանցել է Արամ Մանուկյանին, վերջինս էլ Նիկոլ Փաշինյանին, դրանց մի մասը տղագրվել է մամուլում։ Իսկ մենք՝ լրագրողներս հանձնաժողովի աշխատանքային հանդիպմանն էինք գնացել՝ այդ կադրերը տեսնելու։ Մի խոսքով Գ. Շամշյանը խոսացավ այդ կադրերը ներկայացնել հանձնաժողովին, որտեղ երեւում են մարտի 1-ի լուսադեմին տեղի ունեցածի եւ տարբեր ոստիերը, եւ դեմքերի ժամանակագրությունը։

Շամշյանը ոստիկանության՝ «Ազատության» հրադարակ մտնելու ոստիը չի ֆիխել, որովհետեւ իր ենթադրությամբ մի խանի ոստի ուզ է եկել հրադարակ, այն էլ Խնկո-Ապոր գրադարանի կողմից։ Բարձրախոսով ոստիկանության կողմից որեւէ հայտարարություն չի լսել, միանգամից, իր խոսքով՝ «Ֆուրներն եմ լսել, արա, ասի, իսկական իմ կադրերն ա»։ Սկզբի կադրը վանը կտրելու կադրն է, վերջինը իր վրա հարձակվելունը, իսկ իր վրա հարձակվողը, Շամշյանի պնդմամբ, եղել է Շուշան Պետրոսյանի ամուսինը, 6-րդ վաշտության աշխատակից Արման Հարությունյանը, որը եղել է առանց դիմակի. այդ կադրը, նրա ասելով, կա։ Հետո, նրան զցել են փորի վրա ու ծեծել Կարաոի լճի մոտ, ադարաշը խլել են, հեռախոսները վերցրել, ձեռնաշղթաներ են հագցրել. «Էդ ժամանակ որ ինձ քաշ տալով բերում էին՝ Բաբակեխյան Կարենը, որը որ 6-րդ վաշտության պետը, թմրամոլության դեմ պայքարի, նա ասաց՝ իրան մատով մի կոխե, լրագրող ա, արգելեց... Նորմ-Մարաշի բաժնի պետի տեղակալը, Գալստյան Էդիկը, էկավ ասավ՝ արա, խաղը վախտ ա, էսի կյանքներս կերել ա, կայնի մատս կոխեմ-սրա մի աչքը ֆոքցնեմ, ու մատը մցնում ա աչքս, որին որ առաջ սպայի պատիվը առաջավորելու համար համակարգից հեռացրել են, Բաբակեխյան Կարենը կանխեց, ասի՝ վայ ինչ լավ էր, պրծա»։ Բայց Կարենի գնալուց հետո նրան էլի ծեծել են, մի 15-20 ոստ պառկած է եղել ասֆալտին, հետո նրան խաբ են տվել ոստիկանական Վիլիս, հրադարակից դուրս են բերել, այդ պահին եղել է 8-ից 5 ոստակաս կամ 8-ն։

Մի խոսքով, ըստ Շամշյանի, օդերացիան իրականացնողները 6:20-6:30-ի սահմաններում են մտել «Ազատության» հրադարակ, ոստաստաս են եկել, եկել են ծեծելու եւ վախեցնելու գիտեն այստեղ մնացող ցուցարարներին, դա տեւել է 20-25 ոստ։

«Առաջին նախագահը նստած էր, ոչ մեկը ոիսկ չէր անում մոտիկանար», ասաց։ «Նախագահը նստած կեցիով՝ ծխում էր, ընդեղ ժողովրդին ծեծո՞ւմ էին, ո՞ր պահին էր», հետաքրքրվեց հանձնաժողով եկած Արտակ Սադոյանը։ Շամշյանը խոստացավ նկարներն ուղարկել հանձնաժողովին՝ ժամանակագրությամբ։

Գոհար Վեզիրյանը նույնպես պատմեց վաղ առավոտյան իր տեսածը։ Վերջում, երբ պնդեց, որ ցուցարարների մոտ փայտեր կամ մահակներ չեն եղել, հանձնաժողովի նախագահ Սամվել Նիկոլյանը բերել տվեց ոստիկանության կադրերը, որտեղ ցուցարարների ձեռքին փայտեր կային, ու անգամ դրանք նետվում էին ոստիկանության վրա, լսվում էր նաեւ ոստիկանների ձայնը. «Ազատեք հրադարակը»։ Բայց ոստիկանության կադրերն առանց ժամանակացույցի էին եւ հնարավոր չէր գլխի ընկնել՝ դա ո՞ր պահին է։

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Դաշնակցականների հանրահավաքը նույնպես արգելվեց

ՀՅԴ Հայաստանի գերագույն մարմնի ներկայացուցիչ Արմեն Ռուսանյանը օգոստոսի 20-ին Երեւանի քաղաքապետարան է ներկայացրել իրազեկում՝ 2008 թ. սեպտեմբերի 2-ին զանգվածային հրապարակային միջոցառում անցկացնելու մասին, որը, ըստ իրազեկման, մեկնարկելու է Ազատության հրապարակում կամ Մասենադարանին հարող տարածքում՝ հանրահավաքով եւ ավարտվելու է տոնական համերգով։ Իրազեկումը ընդունվել է Երեւանի քաղաքապետարանում՝ ՀՅԴ Հայաստանի ԳՄ ներկայացուցիչ Թաքուհի Հարությունյանի ներկայությամբ։ Ինչպես Արմենուհեսին տեղեկացրին քաղաքապետարանի հասարակայնության հետ կապերի եւ տեղակալության վարչությունից, ընդունված որոշումով արգելվել է սեպտեմբերի 2-ին Ազատության հրապարակում կամ Մասենադարանին հարող տարածքում հանրահավաքի, այնուհետեւ տոնական համերգի անցկացումը։ Քաղաքապետարանը կազմակերպիչների ներկայացուցչին որոշումը տրամադրել է ընդունելուց անմիջապես հետո։

ԵՐԿԲԱՊԱՀ

Հայտարարություն

Վերջին ժամանակներս, մի շարք զանգվածային լրատվության միջոցներով, որոնք ուժեր սեփական քաղաքական նկատառումներից ելնելով, կրկին սկսել են շահարկել Երկրապահի անունը, իրենց թույլ են տալիս խորհուրդներ տալ Երկրապահին, անգամ կոչեր անել։ Իսկ որոնք մարդիկ էլ ԵԿՄ վարչությունից թաքուն Երկրապահով են զբաղվում եւ չգիտես ովքեր են, ինչ են ուզում, իշխանություն են, ընդդիմություն, ում խաղն են խաղում, ում ջրաղացին են ջուր լցնում։ Բայց ամենուրեք Երկրապահի անունից են խոսում։

Եվս մեկ անգամ հիշեցնում ենք, որ Երկրապահը եղել եւ մնում է հայրենյաց սահմանների պաշտպաններից կազմված հասարակական կազմակերպություն, որի առաքելությունն է շարունակել աջակցել ազգային բանակի հզորացմանը, պետականության ամրապնդմանը, զոհված եւ հաշմանդամ ազատամարտիկների ընտանիքների սոցիալ-տնտեսական խնդիրների կարգավորմանը, զբաղվել մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակությամբ։

Հարկ ենք համարում զգուշացնել Երկրապահին այսպես ասած «խորհուրդ» տվողներին, Երկրապահի ցավով ինքնակոչ տառապողներին, առավել ես նրանց, ովքեր երբեւէ չեն առնչվել Երկրապահին եւ չունեն ընդհանուր ոչինչ Երկրապահի անցած ուղու հետ, որ Երկրապահը «խորհրդատուների» կարիք չունի։ Ժամանակն է, որ սեփական նեղ քաղաքական շահերից բխող հայտարարություններ անող քաղաքական ուժերը զգան, որ Երկրապահը մինչեւ այսօր չի տվել ոչ մի քաղաքական խաղադաշտի, չի ներքաշվել ներքաղաքական ոչ մի խաղի մեջ, թույլ չի տվել եւ հետագայում էլ թույլ չի տալու Երկրապահի անունից հանդես գալու։ Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքի մեջ, Երկրապահն ի զորու է որոշելու իր տեղը եւ հայտարարելու իր վերաբերմունքը։

Երկրապահն ազատագրական պայքարի առաջին օրվանից ժողովրդի կողքին է, զոհված մարտիկի ընտանիքի կողքին է, հաշմանդամ ազատամարտիկի կողքին է։ Երկրապահ իր խոսքն ասել է 20 տարի առաջ, ասել է Շուշիի ազատագրմանը, Հադրութի գյուղերի պաշտպանության ժամանակ եւ 94-ին՝ Մարտակերտի ահեղ մաքառում, երբ հայի արժանապատվության հարցն էր որոշվում։

Երկրապահը՝ հավատարիմ Սպարապետ Վազգեն Մարգայանի ղեկավարությամբ որդեգրած սկզբունքներին, շարունակում եւ շարունակելու է իր առաքելությունը, որն ամրագրված է ԵԿՄ կանոնադրությամբ։

Երկրապահը երբեք չի լսի նրանց կոչն ու խորհուրդները, ովքեր ուզում են Երկրապահին բրթել քաղաքական դաշտ, ովքեր ուզում են Երկրապահին սեփականացնել, հատկապես այս օրերին, երբ արդեն երկու ամիս շարունակ ԵԿՄ վարչությունը, ԵԿՄ բաժանմունքները բռնաբարվում են իրենց ավանդական՝ դեռի Արցախ եւ ազատագրված տարածքներ ուխտագնացության կազմակերպմամբ, փոխանակ աջակցելու, որոնք ուժեր իրենց անհեռատես մտածողությամբ փորձում են արժեզրկել Երկրապահի նվիրվածությունն Արցախ ժողովրդին։

Երկրապահը ժողովրդինն է ու միշտ կանգնած է ժողովրդի կողքին, լինելու է երկրի պաշտպանության առաջին գծում։ Երկրապահը կանգնելու է պետության կողքին, այն պետության, որի կայացման եւ հզորացման համար հերոս տղերքի արյուն է թափվել։

ՍԵՄՅՈՆ ԳԱՐԻԳՅԱՆ,
ԵԿՄ վարչության նախագահ
Արցախի հերոս, գեներալ-լեյտենանտ

Կաթի մթերման կայանների գործարկում Տավուշի մարզի երեք սահմանամերձ գյուղերում

Օգոստոսի 21-ին պաշտոնապես գործարկվեցին կաթի մթերման եւ իրացման երեք կայաններ Տավուշի մարզի Վարագավանք, Ներքին Կարմիրաղբյուր եւ Թովուզ գյուղական համայնքներում։ Կայանների հիմնադրման ծրագիրն իրականացվել է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ), Ագրոբիզնեսի եւ գյուղի զարգացման կենտրոնի, «Աշտարակ-կաթ» ՓԲԸ-ի եւ համայնքապետարանների համատեղ ջանքերով։

2007-ի հունիսից 2008-ի օգոստոսն ընկած ժամանակահատվածում համագործակցող կողմերը կատարել են մի շարք աշխատանքներ, որոնց թվում են յուրաքանչյուր գյուղում համապատասխան շենքերի հիմնանորոգումը, կաթի հավաքման եւ տեղափոխման համար երկու մեքենաների գնումը եւ կայաններում սառեցման սարքերի , կաթի սուզման լաբորատոր սարքավորումների տեղադրումը։ Այս ծրագրի շնորհիվ շուրջ 1000 տեղական կաթի արտադրողներ, ինչպես նաեւ երեք համայնքներից, այնպես էլ հարակից գյուղերից, կօգտվեն եկամտի նոր տեղական աղբյուրից։ Գյուղերում արտադրված կաթն ամեն օր կհավաքվի եւ կվաճառվի «Աշտարակ-կաթ» ընկերությանը։ Կաթի մթերման կայանների աշխատանքը կառավարելու եւ վերահսկելու նպատակով երեք գյուղերում ստեղծվել եւ գործում են կաթ արտադրողների սպառողական կոոպերատիվներ։ Ֆերմերներին պարբերաբար կտրամադրվի խորհրդատվություն՝ կաթի որակի բարձրացման , սանիտարահիգիենիկ նորմերի պահպանման ուղղությամբ։

Նշված համայնքներում այս նախաձեռնությունը ճանաչվել է որպես առաջնահերթ։ ՄԱԶԾ-ն աջակցում է հայաստանյան համայնքներին բյուջեսավարման այս նոր մոդելի ներդրման գործին, որն ապահովում է համայնքային միջոցների առավել բարձր մակարդակի եւ որակի կառավարում, ինչպես նաեւ բյուջեի մասնակցային ոլորտավորում եւ իրագործում։

Միավորված ազգերի գլոբալ զարգացման ցանցն աշխատում է 166 երկրներում եւ աջակցում, որպեսզի իրենք լուծում տան գլոբալ ու ազգային զարգացման մարտահրավերներին։ Ազգային կառույցների հզորացման գործընթացում այդ երկրներին մեծապես աջակցում են ՄԱԶԾ-ի թիմը եւ բազմաթիվ գործընկերներ։ Հայաստանում ՄԱԶԾ-ն հիմնադրվել է 1993-ին եւ աջակցում է Հայաստանի կառավարությանը երկրի զարգացման առաջնահերթություններին , Հազարամյակի զարգացման նպատակներին մինչեւ 2015-ը հասնելու գործում։

Ագրոբիզնեսի եւ գյուղի զարգացման կենտրոնը (ԱԶԳԿ) տնտեսական զարգացման կազմակերպություն է, ունի բարձր որակավորման աշխատակազմ, հաճախորդների լայն բազա, որի գործունեությունը տարածված է ողջ հանրապետությունով։ 2005-ի ապրիլի 4-ին ԱԶԳԿ-ը սաացել է տեղական գրանցում որպես հայաստանյան հիմնադրամ՝ հաջողությամբ շարունակելով ԱՄՆ գյուղատնտեսության դեպարտամենտի իրականացրած 13-ամյա Մարկետինգի աջակցության ծրագիրը (USDA-MAP)։

«Աշտարակ-կաթ» ՓԲԸ-ն Հայաստանի Հանրապետության մասնավոր սեկտորի կաթնամթերքի արտադրող է։ Ընկերությունը համագործակցում է շուրջ 4500 տնտեսությունների հետ, որոնք տեղակայված են երկրի 55 գյուղական համայնքներում։

ՆԵՌԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Նոր բաժանարար գծերի հիմնադրումը աշխարհում

Կամ ում կիսամի հաղթանակը այս պայքարում

Տարավօսական ճգնաժամը շարունակում է մնալ միջազգային հանրության, դիվանագիտության եւ վերլուծական ու փորձագիտական կենտրոնների ուշադրության կենտրոնում: Եվ հարցը ոչ միայն տեղի ունեցածի անսպասելիությունն է եւ Կովկասում, փաստորեն, սկիզբ առած նոր պատերազմը, այլեւ այն նոր իրողությունը, որը օսական ճգնաժամից հետո ստեղծվում է ոչ միայն մեր տարածաշրջանում, այլեւ ողջ աշխարհում: Պարզ է մի բան, եթե մինչ այս ճգնաժամը միջազգային հարաբերություններում իրադարձությունները զարգանում էին կուլիսների հետեւում եւ հանրության աչքից հեռու, արդա այսօր ամեն ինչ տեղի է ունենում բացահայտ, ինչը հնարավորություն է տալիս եզրակացնելու՝ մենք ականատես ենք աշխարհաքաղաքական նոր բաժանումների սկզբին, որի ողջ խորությունը եւ հետեւաբար վտանգավորության աստիճանը շատերը չեն հասկանում: Կարծում եմ նաեւ, որ սա միջազգային հարաբերությունների մեջ վերջին տարիներին առկա քաղաքական իրադարձությունների զարգացումը

23 ՕԳՈՍՏՈՍ 2008 ԷՋ Ա

ԱԶԳ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ռուսահայ կամիտալը կփոխի Հայաստանի դեմքը

ԽԱՉԱՏՈՒՐ ԴԱՎԱՅԱՆ

Այժմ, աչքի առաջ տեղի է ունենում ոչնչական, ազգային հարաբերություն, որը հավասարական բնավորության բարդության վերաբերված անհարթության ոչնչառով կամ չի ընկալվում, կամ ընկալվում է զուտ տեղեկատու իմաստով: Իզուր: Ոչինչ հեռու խնդիրը վերաբերում է տնտեսական ճանաչարհով ոչ միայն Հայաստանի Հանրապետությանը, այլեւ առհասարակ հայությանը նոր ոլորտի, նոր հանգրվանի հասցնելուն: Եվ դրա նախաձեռնողն ու իրականացնողը նախագահ Սերժ Սարգսյանն է:

Փորձենք վերլուծել կատարվողը: Բայց նախքան բուն թեմային անցնելը, թյուրըմբռնումներից ու տարընթերցումներից խուսափելու համար, հարկ եմ համարում ընդգծել՝ ոչ նախագահի, ոչ նրա մերձավոր շրջապատի, ոչ որեւէ բարձրաստիճան պաշտոնյայի, ոչ էլ ռուսաստանցի ազգակից կամիտալիստների հետ որեւիցե անձնական շփում չունեմ: Վերլուծությունս հիմնված է բաց աղբյուրների երկարատեւ ուսումնասիրման եւ դրանից բխող տրամաբանական եզրահանգումների վրա, ու հենց լրացուցիչ տեղեկատվության բացակայությունը կարող է պատճառ լինել որոշ անճշտությունների:

Սկսենք ՀՀ երեք նախագահների՝ սփյուռքահայ կամիտալի ներգրավման վերաբերյալ մոտեցումների համեմատությունից: Առաջինն սացավ սոցիալիստական վիթխարի տնտեսական ժառանգություն եւ իր խմբիչխանության անդամներին օրհնեց խժռելու «կտակը»: Ընչաքաղցությունը, արծաթասիրությունը, մարդու ներսի բոլոր հոգիությունները ջրի երես ելան, եւ անբարոյականությունը դարձավ բարոյական նորմ: Ոգեւորությունից, հայրենասիրական մղումներից դրդված սփյուռքահայ կամիտալիստները պարզապես կողոպտվեցին՝ «ցվեցին»: Իսկ ՀՀՇ-ի պաշտոնաթերթն իր էջերում սփյուռքահայերին անսպառորեն անվանեց «կթան կով», մի արտահայտություն, որով XIX դարում թուրքերը բնորոշում էին հայ ունեւորներին: «Մեծ սուգուն»՝ 1991-1996 թթ. զանգվածային արտագաղթի տարիներին, Հայաստանից հեռացածների թվում էին շուրջ 100 հոգի, ովքեր գենետիկական տաղանդի, ափեսասիրության, ագրեսիվության շնորհիվ Ռուսաստանում հասան բացառիկ բիզնես-հաջողությունների եւ այսօր այդ երկրի տնտեսությունում ունեն նշանակալի դերակատարություն: Սա էր պատճառը, որ հրապարակավ դաղը կասակ արեցի՝ առաջարկեցի, որ այդ մարդիկ, ի նշան երախտագիտության, Լ. Տեր-Պետրոսյանի հուշարձանը կանգնեցնեն Մոսկվայում:

Նախագահ Ռոբերտ Քոչարյանին վիճակված էր այլ առաքելություն, նա պատմության մեջ կմնա որպես երկիրը վիհի եզրից հետ քաշող ու վերականգնող: Նա ստիպված էր շարունակ հրաշիճակային լուծումներ գտնել, բայց եւ տեսնում էր համակարգային փոփոխությունների անհրաժեշտությունը, ինչն իրագործելու ժամանակ գրեթե չունեցավ: Ելույթ ունենալով «Հայաստան-Սփյուռք-Արցախ» համաժողովներից մեկում, նա արեւմտահայ կամիտալիստներին մոտավորապես այսպիսի կոչ հղեց՝ Հայաստանը ձեր հայրենիքն է, եկեք ներդրումներ կատարեք: Այս մտի երկու բաղադրիչներն իրենց մեջ պարունակում էին պատմական, եթե կուզեք՝ գիտական ժխտում, իրաժարշտություն: Արեւմտահայ կամիտալը (նկատի ունեմ Եվրոպան, Ամերիկան, Մերձավոր ու Միջին Արեւելքները) իր բնույթով ջրդերի, կոտրանների, Տեղասպանության հուշի կրող է ու տասնամյակներ շարունակ ընտելացել եւ իրականացրել է մեկ բացառիկ առաքելություն՝ ազգապահպանություն: Նա է սնուցել եկեղեցուն ու վարժարանին, ստեղծել այլ հարակից ազգային կառույցներ եւ ինքնություն պահպանել: Դժբախտաբար, սա դեռ չգիտակցված ու հավուր պատշաճի չգնահատված երեւույթ է, սակայն շատերը ունի դարձերես՝ արեւմտահայ կամիտալը պետականակերտ չէ: Այն գոյատեւել է կայացած հասարակարգերում, պետություններում եւ զոյից երկիր կառուցելու փորձառություն չէր կարող ունենալ ու չունի: Արեւմտահայ կամիտալիստներից շատերի համար հայրենիք է ոչ թե Հայաստանի Հանրապետությունը, այլ՝ կորսված հայրենիքը, իսկ տնտեսական առումով նրան ձեռնտու է ներդրումներ կատարել ոչ թե Հայաստանում, այլ՝ փորձված, շահավետ տվյալներում: Ով ինչ թվեր ուզում է բերի, բայց ակնհայտ է, որ արեւմտահայ կամիտալից ունեցած հույսերը չարդարացան: Այն հիմնականում եղավ բարեսիրական, բայց ոչ՝ երկիրը տնտեսապես առաջ մղող գործոն (մի քանի բացառությամբ՝ Զորվ Զորոյան եւ ուրիշներ):

Կարծում եմ, այդ ակնհայտությունը տեսանելի էր նաեւ նախագահ Ռ. Քոչարյանին, որը «բնական» դաշնակից Ռուսաստանի հետ հավակողմանի հարաբերությունները հասցրեց հնարավորինս բարձր մակարդակի, դրանով հանդերձ ստեղծելով հենք, որի վրա նոր շինություն կառուցելը վիճակված է նախագահ Ս.Սարգսյանին:

Անցյալ տարվա դեկտեմբերի 22-ին «Ազգը» հրապարակեց իմ «Նոր մարտոն» հոդվածը, որտեղ ի մասնավորի առաջարկում էի երեւան-Լոս Անջելես հեռուստամարաթոնին զուգահեռ կազմակերպել երեւան-Մոսկվա նույնիսկ միջոցառում (հիմա էլ եմ նույն կարծիքի եւ ինչ ուզես թող մեկ անգամ կբացատրեմ դրա անհրաժեշտությունը): Ուսումնասիրել էի Ռուսաստանի շուրջ 60 բնակավայրերում գործող ավելի քան 200 հայ ձեռնարկատերերի կենսագործունեությունը, ընդ որում՝ ընտրել էի բացառապես առաջին դեմքերի՝ բիզնես-առաջատարների: Համոզմունքը ամրացուցիչ էր՝ առկա էր հայկական գործող տնտեսական նիստ, որը գրեթե անհաղորդ էր Հայաստանի տնտեսական կյանքին:

Եվ ահա նախագահի թեկնածու Ս. Սարգսյանը նախընտրական խաղարշավի ընթացքում խնդիրս հայտարարում է՝ իմ ծրագրի ողնաշարը համայն հայության ողջ ներուժը հայտնաբերելն ու օգտագործելն է: Իսկ Առաքիր համայնի ընտրողների հետ հանդիպման ժամանակ շարունակում՝ ափսոսում կա 100 մլրդ դոլարի հայկական կամիտալ, այնինչ մենք չենք կարողանում դրա 1%-ն իսկ ներգրավել Հայաստանի տնտեսության մեջ: Լավ էր ասում, բայց ինչպես պիտի աներ: Բանից պարզվում է՝ գիտեր:

Հուլիսի 14-ին «բազեականների» հետ հանդիպման ժամանակ ասաց. «Խոսքս ուզում եմ ուղղել մեր գործարարներին ու բոլոր մեծահարուստ հայերին. ավելի ակտիվ ու նախաձեռնող եղեք հայրենիքի շենացման ձեր նախաձեռնություններում: Սա է իմ խնդրանքը բոլորին»: Դեռեւս 1910 թ. նման բան ասել էր Այեխանյոր Մանթաշյանցը, որի անմահ խոսքերն ուղղված են բոլոր ժամանակների ու բոլոր երկրների հայ ձեռնարկատերերին.«Հայ վաճառականներ, ձեր փառքի տունը, որ անմահ կմնա՞ ձեր տառապյալ հայրենիքն է: Հայոց կյանքն է այն պանթեոնը, որ ձեր բարի հիշատակը պիտի պահվի Աստծո եւ մարդկանց առաջ՝ իր համակ պայծառությամբ. ուրիշ թանգարաններում ձեզ համար միայն մոռացության փոշի է պահված:

Հայ վաճառականներ, դուք հայ ազգի վաստակավոր ձեռքն եք, նրա հաստատությունների սնունդ մատակարարող աշխատավորը, նրա կենդանի գանձն եք ու գանձարանը: Հետեւաբար, նրանց վրա հսկելու, կարգադրելու, կարգի բերելու բարոյական իրավատերը: Մի՛ լռեք, մի՛ հեռանաք հայ վաճառականի ավանդական ճանապարհից, մի՛ մերժեք ձեր պարտքերն առ հայրենիք, մի՛ հրաժարվեք ձեր իրավունքներից՝ ազգային գործերի դեկը ձեր ձեռքից վար թողնելով»:

Նախագահի կոչին անմիջապես հետեւեցին ֆինանսական խոշոր ներդրումներ կատարելու խոստումներ, իսկ հուլիսի 26-ին Ծաղկաձորում տեղի ունեցավ Սփյուռքի մասին մեր դասական պատկերացումները:

Անենապակառու բացասական յուրահատկությունը դեռեւս անբողոքելի կազմակերպված չլինելն է՝ Ռուսաստանի հայությունը դեռեւս հանձնելիին ձեւավորման փուլում է: Անխոհեմ է ուտանալ Առա Աբրահամյանի, նրա ղեկավարած Ռուսաստանի հայերի միության, Հայկական հանձախարհային կոնգրեսի ջանքերն այդ ուղղությամբ, սակայն դա դեռ բավարար չէ (ինչն ընդունում է Ա. Աբրահամյանն ինքը): Պատճառները մի քանիսն են: Հայությունը բազմաբեւեռ է, բաղկացած է «անհիշելի» ժամանակներից Ռուսաստանում ծնված-մեծացածներից, ընդհանուր ոչեռության՝ խՍՀՄ-ի օրոք այստեղ հաստատվածներից եւ 1991-ից սկսյալ Հայաստանից արտագաղթածներից: Այս զանգվածը, ի տարբերություն արեւմտահայության, ունի մի դրական յուրահատկություն՝ գեղակիր մասի համար, այդուհանդերձ, Հայաստանը շոշափելի հայրենիք է, հարազատ է:

Տնտեսական բաղադրյալը նույնպես տարաբնույթ է. կան մեր ու միջին բիզնեսի տասնյակ հազարավոր ներկայացուցիչներ, որոնք հոգում են իրենց եւ ընտանիքի ապրուստը, սեպհական հագուստ տվող, Նժդեհի բառով ասած՝ իրեղակերությամբ զբաղվող փողոցներ ու վերջապես, կամիտալիստներ: Վերջիններիս Ռուսաստանը ոչինչ չի նվիրել, պարզապես տաժանել է հակասար պայմաններ, եւ նրանք իրենց կրթվածության, կազմակերպական բացառիկ հատկությունների, տնտեսական ափսեասանի շնորհիվ հասել են փայլուն արդյունքների ու կազմում են Ռուսաստանի հայության ամենաազդեցիկ, ամենահաջողակ խավը: Եվ ահա «հինգ տասնյակից ավելի» վառ անհատականություններ, որոնցից ոմանք բիզնեսում նույնիսկ մրցակիցներ են, միավորվում են եւ հայտարարում Հայաստանում ներդրումներ կատարելու պատասխանատվության մասին: Չգիտեմ, թե Ս. Սարգսյանն ինչ բառեր է գտել կամիտալիստների հետ խոսելու համար (կարծում եմ, դա տեղի է ունեցել դեռեւս նրա վարչապետության օրոք), բայց այդ մարդիկ հավատացել, վստահել են նախագահին, ով բազմիցս բարձրաձայնել է իր նպատակները, որոնք կարելի է ամփոփել մեկ բանաձեւումով՝ Հայաստանի զարգացում:

Ըստ երեւույթին, նախագահին առնն հաջողվել է համախարհային հայկական կամիտալի 1%-ը եւ կամ նույնիսկ ավելին հայթայթել: Փորձենք դիտարկել, թե դա ինչ ազդեցություն եւ ինչ հետեւանքներ կարող է ունենալ:

Տնտեսական գերասպարեզ

Այս առումով ուրախալի ու գովելի է, որ վերջերս գտնվելով Երեւանում, սփյուռքում խոշորագույններից՝ «Ռուսասանի հայերի միություն» համառուսասանական կազմակերպության ու «Համաշխարհային հայկական կոնգրես» հայկական հասարակական միավորումների միության նախագահ Արա Աբրահամյանը ոչ միայն ողջունել է նախարարության ստեղծման գաղափարը, այլեւ պատրաստակամություն հայտնել համագործակցել դրա հետ՝ ի բարություն հայրենիքի եւ սփյուռքի:

Հայաստանի կենտրոնական բանկի նորանշանակ նախագահ Արթուր Տավադյանը վերջերս հատակ տեղեկություններ հրադարակեց Համահայկական բանկ կազմակերպելու վերաբերյալ: Այդ կառույցը եւս պիտի լինի դիտարկվող նախարարության կարեւոր գործընկերը:

Ո՞վ է ղեկավարելու սփյուռքի հարցերի նախարարությունը

Մեր կարծիքով, այդ պատասխանը կարող են հավանել երկու կարգի մարդիկ. Հայաստանի նախկին ղեկավարներից (ՀՀ նախագահ, Ազգային ժողովի նախագահ կամ ՀՀ վարչապետ), որոնք իրենց նախկին պետական բարձր կարգավիճակով էլ ավելի կընդգծեն սփյուռքի հետ կապերի նկատմամբ պետական հոգածությունն ու ուշադրությունը: Երկրորդ կարգին մեծ կդասեինք բազմափորձ պետական (ոչ այնքան քաղաքական) մի գործչի, որն այդի է ընկնում իր հավատարմությամբ կեցվածքով մեր հասարակական-քաղաքական կյանքում: Այդ հատկանիշը միայն կօգնի նախարարին իր գործունեության ընթացքում:

Այս նյութն արդեն ավարտված էր, երբ հրադարակվեց ՀՀ նախագահի հրամանագիրը՝ Հրանուշ Հակոբյանին ԱԳՆ սփյուռքի հետ կապերի պետական կոմիտեի նախագահ նշանակելու վերաբերյալ: Մեր խորհրդանշան սաստիկ հնագույն պատգամավորը, իրավագիտության դոկտորը, որը խորհրդային Հայաստանի ղեկավարության մաս է կազմել, երկու անգամ գլխավորել է Նորանկախ Հայաստանի խորհրդարանի մշտական հանձնաժողովները, վարել է հանրապետության նախարարի պատասխանատու, լավ, եթե չասենք՝ լավագույն թեկնածուներից է, հաշտ ընտրություն է: Եթե այս ամենին ավելացնենք շրջանառվող խոսակցություններն այն մասին, որ հենց Հրանուշ Հակոբյանն է գլխավորելու ՀՀ սփյուռքի նախարարությունը, կարելի է ասել, որ նոր հասատությունն ունի լավ ղեկավար:

Այսօր ողջ են Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահներ Կարեն Դալլաքյանը (1985-90 թթ.) ու Հրաչիկ Սիմոնյանը (1990-92 թթ.), կոմիտեի նախկին փոխնախագահներ Գրիգոր Բաղդասարյանը, Պետրոս Պետրոսյանը, Ռոմեն Կոզմոյանը, Կարեն Միհայելյանը եւ այլք: Ցեր խանգարի, որպեսզի նրանց փորձը, կարիքն ու առաջարկությունները օգտագործվեն նոր նախարարության գործունեությունում: ■

Ազգային խնդիրներ

Հայ դիվանագիտական մտքի նմուշների՝ մասնավորապես Դիանա Աբգարի մասին տեղեկությունների որոնումները բազմաթիվ վայրեր տարան ինձ: Երկար որոնումները, ի վերջո, ստեցին իրենց դրական արդյունքները:

Դիանան, ում իսկական անունը Անահիտ է, իսկ օրիորդական ազգանունը Աղաբեկյան, ծնվել է Արեւելյան Հնդկաստանի բրիտանական գաղութ Բիրմայի մայրաքաղաք Ռանգունում (այժմ՝ Յանգոն), բարեկեցիկ ընտանիքում: Նա ծննդյան տարի, ինչպես նաեւ նրա հետ կապված շատ այլ հարցերի մասին տարբեր, հաճախ հարաժեշտ տեսակետներ կան: Տարբեր աղբյուրներում Դիանայի ծննդյան վայրը նշված է Բիրման, սակայն Բուենոս Այրեսում տպագրվող «Արմենիա» պարբերականի 1984 թվականի համարներից մեկում որպես նրա ծննդյան վայր է նշվում Նոր Ջուլֆան: Մեկ այլ տարբերակ է գտվել «Հայ գինվոր» թերթի անցյալ տարվա 3 համարում, որտեղ լույս տեսած ակնարկում նշվում է Հնդկաստանի Բոմբեյ (այժմ՝ Մումբայ) քաղաքը:

Իրականում Դիանայի անունը Դալանա է, բայց քանի որ ինքը՝ Աբգարը, իր անունը հայերեն գրել է Դիանա՝ այժմ ընդունվում է այդ տարբերակը: Հայտնի է, որ նրա նախնիները եղել են նորգուդայեցիներ: Մայրը՝ Զամրուտը, եղել է հանրահայտ հնդկահայ վաճառական, գրող, թարգմանիչ: Հայտնի է նաեւ, որ նա եղել է Մեսրոպ Թաղիադյանի մտերիմը: Հոր մասին ճշգրիտ տեղեկություններ չկան, միայն հայտնի է, որ Անահիտի ծնողները զբաղվել են կաթսաների արտադրությամբ: Հետագայում նրա ընտանիքը տեղափոխվել է հնդկասանի նշանավոր կալկաթա քաղաք, որտեղ էլ նա անգլիական կրթություն է ստացել կանանց մենաստանում:

1890-ին Աբգարը ամուսնացել է ծնունդով նորգուդայեցի Միխայել Աբգարյանի (Մայքլ Աբգար) հետ, ով էլ կանխորոշել է օրիորդի հետագա կյանքի ընթացքը: Նրանց ամուսնությունը տեղի է ունեցել Չինաստանի հոնկոնգ քաղաքում, որից հետո նորադարձ ամուսնական զույգը ճանապարհորդության է մեկնել Չինաստանի այլ վայրեր եւ Ճապոնիա: Այստեղ էլ նրանք որոշել են մշտական բնակություն հաստատել՝ ընտրելով Ճապոնիայի Կոբե քաղաքը: Այստեղ Միխայելը զբաղվում էր մեքենաների վաճառքով, ինչպես նաեւ հնդկաստանից Ճապոնիա եւ Ճապոնիայից հնդկաստան արքեր արտադրների ներմուծման եւ արտահանման գործով: Նա հիմնեց առեւտրական մեծ ճարկություն եւ բացեց «Great Eastern» խրատանոցը:

1891-ին ծնվեց Դիանայի առաջնեկը՝ Ռոզը, հետո որդին՝ Միխայել կրտսերը, իսկ 1896-ին՝ Ռութը: 1906-ին՝ իր ամուսնու անակնկալ մահից հետո, Դիանա Աբգարը շարունակել է ընտանեկան գործը՝ մինչ որդու չափահաս դառնալը: Այնուհետեւ նրա ընտանիքը տեղափոխվել է Ճապոնիայի ամենաքանակ նավահանգիստներից մեկը՝ Յոկոհամա, որը գտնվում էր Տոկիոյից 30 կմ հեռավորության վրա: Այստեղ Դիանան բացել է ընդարձակ վաճառատուն, որը առեւտուր էր կատարում Չինաստանի, ԱՄՆ-ի եւ Եվրոպայի հետ: Շուտով նրա ընտանիքը մեծ առանձնատուն է գնում Յոկոհամայի Յամատե թաղամասում, որի հյուրընկալ դռները միշտ բաց են եղել ինչպես օտար բարեկամների, այնպես էլ հայ գաղթականների առաջ:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին եւ նրա տարիներին Դիանա Աբգարը հանդես է եկել հայ ժողովրդին նվիրված դասախոսություններով, հոդվածներով, աշխատակցել է Յոկոհամայի «The Japan Gazette» անգլալեզու ճապոնական թերթին: Այդ թերթի հրատարակությունում նրա անգլերեն հրատարակած գրքերից են «The Truth About the Armenian Massacres»-«Ճշմարտությունը հայության ջարդերի մասին» (1910), «The Case of the Armenians»-«Հայկական հարցը», Betrayed Armenia-«Դավաճանված Հայաստան» (1912), «In His Name»-«Իր անունով» (1911), «The Peace of Europe»-«Եվրոպայի խաղաղությունը», «The Peace Problem»-«Խաղաղության հարցը» (1912), «Peace and No peace»-«Խաղաղություն եւ ոչ խաղաղություն» (1912): Նա նաեւ կատարել է ժամանակի հանրահայտ «Թայմս», «Ֆիգարո» եւ այլ թերթերի

ԳՐԻԳՈՐ ԵՐԻՑՅԱՆ

ԴԻԱՆԱ ԱԲԳԱՐ

Հայաստանի Հանրապետության առաջին կին դեսպանը

ու ամսագրերի պատվերները՝ գրելով հոդվածներ Արեւելքի երկրների մասնության վերաբերյալ: Բացի հայերենից ու անգլերենից Դիանան տիրապետել է նաեւ հնդկերենին, ճապոներենին ու չինարենին:

Դիանա Աբգարի գրությունները ու ելույթները հաղթական իրազեկության են բերել շատերին եւ պատմական մեծ արժեք են ներկայացնում: Նա սեռնում եւ կարդում էր ոչ միայն հայկական ու ճապոնական, այլեւ ամերիկյան, անգլիական ու հնդկական մամուլը, ինչպես նաեւ նամակագրական կապեր ուներ ավելի հաղթական, հոգեւոր եւ այլ բնագավառների ճանաչված գործիչների հետ: Նրա ելույթները՝ գրքերը, անհուսալ, կասարել են իրենց առաքելությունը՝ ճապոնական հասարակությանը ծանոթացնելով հայոց ցեղասպանությանն ու հայ ժողովրդին: Այս մասին է վկայում 1919-ին լույս տեսած թուրքական «Թասֆիր» թերթը: Թուրքական թերթը ավելի հարուցի կողմերից ի վնաս հայերի տարբեր փաստեր էր հավաքում: Հարցումի ընթացքում թուրքը Կ. Պոլսում գտնվող մի ճապոնացու են հանդիպել: Վերջինս լավատեղյակ էր հայկական ցեղասպանությանն ու ծանոթ հայկական հարցին: Ճապոնացին մեղադրել է թուրքերին ու խորհուրդ տվել հնարավորին չափով հարմարվել իրենց երկրում ապրող ոչ իսլամ տարրերի հետ, հակառակ դեպքում, կարժանանան եվրոպայի կշեռքքանին:

Դիանան նաեւ բանասեղծություններ գրել, որոնք լույս են տեսել եվրոպական ու ամերիկյան մամուլում: Նրա վերջին գործը եղել է «From the Book of One Thousand Tales», «Stories of Armenia and its People»-«Հազար պատմվածքների գրքից», «Հայաստանի ու նրա մարդկանց պատմությունները» պատմվածքների ժողովածուն, որը 2004-ին ԱՄՆ-ում հրատարակել է նրա թոռնուհին՝ Լուսիլ Աբգարը: Ճիշտ է, դրանք գեղարվեստական գրվածքներ են, սակայն բոլորն էլ իրական հիմք ունեն եւ ներկայացնում են հայ ժողովրդի կյանքն իր հայրենիքում: Աբգարը դրանք լսել եւ գրի է առել Ճապոնիա հասած հայ փախստականներից:

Դիվանագետը լավատեղյակ էր ինչպես հայ ժողովրդի ծանր վիճակի, այնպես էլ եվրոպական երկրներից տրվող օգնության պակասի մասին: Ճապոնացի ուսումնասիրող Հիդեհարու Նակաջիմայի խոսքերով՝ «Դիանա Աբգարը, 46 տարի ապրելով հեռավոր Ճապոնիայում, միակ հայ կինն էր, ով լիովին տիրապետում էր միջազգային իրավիճակին»: Նա ամեն ինչ արել է եվրոպայի օգնությունը կազմակերպելու ուղղությամբ, բայց ապարդյուն: Դիանան ցանկանում էր, որ ԱՄՆ-ը խնամակալ պետություն դառնա Հայաստանի համար, որը նույնպես, ինչպես գիտենք, տեղի չունեցավ: Արդյունքում կատարվեց ամենաահավորը. Դիանայի հայրենակիցները, հայ ժողովրդի սպանվածը զոհ գնաց թուրքական յաթաղանին: Հենց այդ ժամանակ իր կրթությամբ, հարստությամբ ու հայրենասիրությամբ մեծ համբավ ու հեղինակություն վայելող Դիանան դրսեւորեց իր մեծ սերն ու հարգանքը հայ ժողովրդի հանդեպ: Նա փորձում էր ամեն կերպով օգնակար լինել ազգակիցներին ու Հայաստանին, որտեղ, ի դեպ, երբեք չէր եղել: Եվ դա նրան հաջողվեց: Դիանան կարողացավ օգնել բազմաթիվ հայ գաղթականների, ովքեր Սիբիրի եւ Ճապոնիայի վրայով փորձում էին անցնել ԱՄՆ:

Ասում են, որ Ճապոնիայում միշտ էլ հայերի նկատմամբ բարեհաճ վերաբերմունք են ունեցել եւ անժխտելի է Դիանա Աբգարի մեծ ավանդը հայ-ճապոնական բարիդրացիական հարաբերությունների կայացման գործում: Թողնելով իր աշխատանքը՝ Դիանան անձամբ է գնացել ճապոնական իշխանությունների եւ հյուպատոսների մոտ՝ փախստական հայերի փաստաթղթերի խնդիրները կարգավորելու եւ նրանց ճանապարհորդությունը դյուրացնելու համար: Նա իր առեւտրական գործակալությունը օգտագործել է որպես հայ գաղթականների դիվանագիտական առաքելության գրասենյակ, իսկ իր տունը՝ նրանց ժամանակավոր ապաստարան:

Դիանա Աբգարի գործերի մասին կարելի է երկար խոսել: Դրանցից շատերը զարմանք ու միաժամանակ թերահավատություն են առաջացնում: Այդ գործերը ունեն գրավոր ապացույցներ ու ճշմարիտ վկայություններ: Դրանցից մեկը Մեծ եղեռնից մազապուրծ ԱՄՆ-ի քաղաքացի Հարությունն Թաշճյանի, նրա կնոջ եւ դստեր պատմությունն է: 1915 թվականին նրանք Խարբերդից փախել են Ռուսաստան, ապա հասել Սիբիր եւ Վլադիվոստոկ, որտեղից նրանց ուղարկել են Ճապոնիա՝ Տոկիո եւ Յոկոհամա: Այստեղ նրանք հայտնվել են ճապոնական ոստիկանության կասկածի տակ, որը Ռուսաստանից եկած հայերին կասկածում էր բոլշեւիկյան լրտեսներ լինելու մեջ: Այդ ժամանակ Դիանա Աբգարը Սանֆոյան ազգանունով բանիացի մի հայ օրիորդի եւ Ճապոնիայում ամերիկյան հյուպատոսի ընկերակցությամբ գնացել է Թոքիոյանների մոտ եւ նրանց օգնության ձեռք մեկնել: Նրա ջանքերով ընտանիքը մեկնել է Կանադա, որտեղից էլ գնացքով հասել է Միացյալ Նահանգներ: Փախստականների մեկնելուց հետո էլ Աբգարը անընդհատ հետաքրքրվել է նրանց ճակատագրով:

Ճապոնիայում Դիանային այցելել է սուրբ Էջմիածնի պատվիրակ Ռուբեն Ծ. Վդ. Մանասյանը: Նա Ամենայն Հայոց կաթողիկոս Գեւորգ Ե-ին ուղղված նամակում գրում է. «Տիկին Դիանա Աբգարը չի եղել հարուստ՝ ապրելով մի երկրում, ուր օտարների համար փակված է ամեն մի ապրուստի աղբյուր: Նա, շնորհիվ իր լեզվագիտության եւ մասնագիտական ընդունակությունների, կարողացել է ապրուստի միջոց ստեղծել եւ հասարակության մեջ այնքան ընկնող դիրք գրավել: Նա Հեռավոր Արեւելքի տիրուհին է, ում դիմում են ամենը: Երկրաբարձի ժամանակ, երբ հրդեհ դարակ դարձած Յոկոհամա քաղաքը կործանվում է, եւ կոտորվում է հարյուր հազարավոր ազգաբնակչություն, տիկին Աբգարյանն իր ընտանիքով փրկվում է Աստծո նախախնամությամբ, բայց կորցնում է իր ամբողջ ունեցվածքն ու միանգամայն ընչազուրկ վերադառնում Կոբե»:

1919 թվականին Դիանան մասնակցել է խարբերդում (Չինաստան) կայացած Սիբիրի եւ Ծայրագույն Արեւելքի հայերի համաժողովին, որտեղ նրան ընտրել են պատվավոր նախագահ:

1920 թվականի հուլիսի 2-ին Դիանա Աբգարը նշանակվել է Հայաստանի առաջին հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ եւ գլխավոր հյուպատոս Ծայրագույն Արեւելքում, Հայաստանի արտաքին եւ լիազոր դեսպան Ճապոնիայում: Պահպանվել է Հայաստանի հանրապետության արտաքին գործերի նախարար Հովհ. Օհանջանյանի նամակը Դիանա Աբգարին՝ վերջինս հյուպատոս նշանակելու մասին: Նամակում Օհանջանյանը շնորհակալություն է հայտնում նրանից՝ նորաթին հայրենիքի շահերը պատշաճորեն եւ հայրենակիցների ծանր վիճակը թեթեւացնելու համար:

Դիանա Աբգարի դեսպան նշանակվելուց հետո Ճապոնիան դե ֆակտո ճանաչեց Հայաստանի հանրապետությունը՝ հետեւանքներով տիկնոջ մարդասիրական գործունեությունը եւ փախստականներին տրվող օգնությունը: Նրա հովանավորությունն են վայելել նաեւ Սինգապուրի եւ Ինդոնեզիայի հայերը:

Ժամանակակիցների վկայությամբ՝ Դիանա Աբգարը եղել է զարգացած, կրոնասեր, հաղթականատես տեղեկացված, գրագետ եւ հասկ գործող անձնավորություն: Նա ունեցել է նաեւ շատ տպավորիչ արտաքին ու հմայք: Երբ նա մտել է տարբեր դահլիճներ, բոլոր ազգերի դիվանագետները միշտ ոտքի են կանգնել:

Դժվար է համեմատել Դիանայի գործունեությունն ուրիշ կին դիվանագետների գործունեության հետ: Հիմնական պատճառը, թերեւս, համեմատության եզրերի բացակայությունն է: Դիանան ապրել է իր ժողովրդի համար գերծանր ու լարված ժամանակաշրջանում, երբ կերտվեց ու անկում ապրեց հայոց հանրապետությունը, երբ երիտթուրքի ձեռքով մեկուկես միլիոն հայ ոչնչացվեց: Այնուամենայնիվ, Դիանայի կյանքին ու գործունեությանը անծանոթ մարդիկ հաճախ նրան հատեմատում են միջազգային եւ ռուսական հեղափոխական գործիչ ու սովետական դիվանագետ Ալեքսանդրա Կոլոնտայի հետ: Կոլոնտայը համարվում է աշխարհի առաջին կին դեսպանը, մինչդեռ Դիանա Աբգարը Ճապոնիայի դեսպան նշանակվել է 1920 թվականին, իսկ խորհրդային, այդ թվում՝ հայ հասարակության կողմից պաշտելի Կոլոնտայը՝ միայն 1923-ին Նորվեգիայում, ապա Մեքսիկայում ու Շվեդիայում: Կրկին առաջադրվում է մեր պատմության նկատմամբ հայերիս ու օտարների անտարբերությունը, որի արդյունքում անհնար է դառնում հաստատել ամենատարրական ժամանակագրական իրողություններ:

Ճիշտ է, Դիանա Աբգարի գործունեությունը ոչ միշտ է գնահատվել ճապոնացիների եւ հատկապես հայերի կողմից, բայց Ամենայն Հայոց Գեւորգ Ե կաթողիկոսը, ըստ արժանվույն գնահատելով Աբգարի գործունեությունը, 1926-ին արժանացրել է նրան հատուկ կոնդակի՝ հայ ժողովրդի բահերին ծառայելու եւ դժվար պահերին նրա կողքին լինելու համար:

Դիանա Աղաբեկի Աբգարը մահացավ 1937 թվականի հուլիսի 8-ին, Յոկոհամայում: Նրա անվանն ամփոփվեց տեղի օտարերկրացիների գերեզմանատանը՝ ամուսնու հիրիմի կողքին:

Այսօր Աբգարի հիրիմը գտնվում է Տոկիոյում գործող ճապոնա-հայկական բարեկամության խմբի հոգածության տակ:

Դիանա Աբգարի սերունդներն ապրել են ԱՄՆ-ում: 1929-ին Սան Ֆրանցիսկո են տեղափոխվել նրա դուստրը՝ Ռոզը, ամուսնու՝ Սամվել Գալուստյանի հետ, հետո մյուս դուստրը՝ Ռութը, իսկ 1945-ին էլ Միխայել Աբգար կրտսերը: Հայկական ոգով մեծացած ու դաստիարակված երեխաները հետագայում աշխույժ գործունեություն են ծավալել Ամերիկահայ Օգնության խաչի եւ եկեղեցական շրջանակներում:

Դիանա Աբգարը հայոց պատմության մեջ թողել է քաջ, ազնիվ, խելացի, արդար ու գթասիրտ հայ կնոջ կերպար: Նա չի ապրել Հայաստանում եւ հայրենակիցների մասին լսել է միայն իր տանը ապաստանած գաղթականներից, բայց եղել է իսկական հայ եւ ապրել հային վայել կյանքով ու գործունեությամբ: Գուցե շատերը այսօր նրան չեն հիշում, շատերը, գալով, չգիտեն նրա մասին, իսկ պատմության էջերն ու հայ գրականությունը ողողված են տակաս արժանի մարդկանց անուններով, բայց կենդանի են նրա գործունեության արդյունքում ծնված ստեղծագործությունները ու «պատվերը», որոնք հայերի փոխարեն այսօր վայելում են համաշխարհային դիվանագիտությունն ու նրա օտարազգի ներկայացուցիչները: ■

ԻՆԽԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ...

ինքնությամբ վերուծել եւ գտել են ճշմարիտ ուղիները ազգի խնդիրների լուծման համար: Նրանք իրենց խորհուրդներով օգնել են իշխանավորներին՝ որեւէ խնդիր առաջին հերթին լուծել առաջադրության ծագրին համապատասխան, ընտրել խնդրի լուծման միշտ դեղատարներին, առանց որի հնարավոր չէ դիմակայել եւ լուծել ներհիրալ խնդիրները, որոնք տեսանելի են անգամ հասարակ մահկանացուին.

Այդ խնդիրների լուծման համար պետք է օգտագործել դարերի պատմություն ունեցող մեր հոգեւոր ժառանգության վրա հիմնված աշխարհաճանաչման եւ մարդաճանաչման գիտելիքների գինանոցը, հոգեւոր մեկնությունները ժամանակակից գիտական բացահայտումների հետ համադրելով՝ ցույց տալ ազգի արժեքների ու դավանանքի ճշմարտացիությունը, մարդկության գիտակցության զարգացման առաջընթացում նրա առաջատարությունը: Այն պետք է իրականացնել երկխոսությամբ, որի լեզուն կարող են լինել գիտական փաստերն ու պատմական արժեքները, հոգեւոր մեկնությունները: Իսկ երկխոսության դաշտը, անհերեսաք չարից պաշտպանելու համար որոնց վահան ունենալ ազգային արժեքները, գաղափարախոսությունը, հավատն ու կրոնը: Դրա համար հայ ազգը ունի բոլոր բավարար հնարավորությունները:

Այսօր, երբ մարդկությունը մտնում է մտավորից հոգեւոր ոլորտ, եւ հայտնի է դառնում հոգեւորի գերակայությունը, հայ ազգը կարող է սանձնել իր իրական դեմ առաջադրության մեջ՝ հենվելով հազարամյակների պատմություն ունեցող, բազում փորձություններ կրած հոգեւոր առաջընթացի փորձի եւ այդ ընթացքում համամարդկային արժեքներ ստեղծած իր մեծերի թողած վերլուծությունների ժառանգության վրա, աշխարհին ներկայանալ որպես մարդկության հոգեւոր դաշտն առաջ մղող ուժ, հանի որ մարդկության հոգեւոր առաջընթացը մշտապես ընթանում է նույն օրինաչափություններով՝ նյութական, հուզական, մտավոր, հոգեւոր ոլորտներում, պարզապես տարբեր ժամանակներում: Հայ ազգը մարդկությանն ասելիք ու տալիք ունի առաջադրությունն անընդհատ զարգացման մեջ պահելու խնդրում: Եվ փոխանակ հարյուրամյակների պատմություն ունեցող թեզերից ու ազգերից թելադրվող կարգերն ու օրենքներն անվերապահորեն ընդունելու (որոնց դեմքում անգամ մարդու իրավունքներում հաշվի է առնվում ավելի շատ նրա կենդանական, բնազդային, հան ավելի կարեւոր հոգեւոր բաղադրը), ներկայացնել Դավիթ Անհաղթի, Անանիա Շիրակացու, Սուրբ Գրիգոր Նարեկացու, Գրիգոր Տաթեւացու, մյուս մեծերին, համադրելով աշխարհի ժամանակակից գիտական բացահայտումներին, որը հայերիս կազմի փոքրության բարդույթից, կոչածի հզոր նյութական աշխարհում առաջատար հանդիսացող այլ ազգերի ու թեզերի հավասար ուղեկիցը: ■

ԱԶԳ-ՆԵՐԴԻՐ

Քոլսազերծումներ

Ուշացած հոգեհանգիստ...

Բ էջից

ռազմական բանակին կամ «Մասնայ Ծոռ»-ի ծոցը ջաղացի քարերուն ու քառասուն գոմէշի կաշիներուն կողին:

Հայկազեան համալսարանին մէջ ապրած տուրք տալը ստիպեցաւ ընթացին ուրիշ դէպ չեմ լիներ՝ երբ 1958-ը խուժած ըլլայ դասաւանդման դարձ: Մոդէն իսկ առկայ դասագանկը (ուրկէ ամբողջապէս կը բացակայէր յեղեղոնեան սփիւռի դաստիարակութեան ուսուցումը) այդ հնաւանութիւնը չէր տար:

Այդ դէմքերը կամ, ինչպէս վերը նշեցի, ներ-կայ սերունդը անհանգստացնող նմանաթիւ իրադարձութիւններու հայագիտական ամբիոնի կողմէ յաջախակիութեան կազմակերպուող եւ հանրութեան ուղղուած երեկոյեան ձեռնարկներուն նիւթ դարձնելը բնականաբար աւելի դժուար էր, որովհետեւ համալսարանէն ներս թէ դուրս դասախօսներու խանդավառութիւնը չէին բաժներ «սարուացած» նիւթերը զգոնելու առնչութեամբ: 2005-ին, երբ Հայկազեան համալսարանի հայագիտական ամբիոնը, համալսարանի յիսնամեակի տօնակատարութեանց ծիրէն ներս, լիբանանահայութեան մասին միջազգային գիտաժողով մը կազմակերպեց, համալսարանի բարձրագոյն ղեկավարութեան ու գիտաժողովի անմիջական կազմակերպիչներուն միջեւ նախօրօք համաձայնութիւն գոյացած էր, թէ զեկուցման որեւէ առաջարկ տիտի չմերժուի՝ որեւիցէ զգայուն նիւթ առնչելու հեռեւանքով: Դժբախտաբար, այս պարագային, 1958-ին ուղղակիօրէն առնչուող ոչ մէկ զեկուցում սացանի:

Համալսարանի պարտականութիւններէս դուրս, այս տարիներուն յաճախ հանդիպած եմ մարդկանց, որոնք սիրայօժար պատմած են 1958-ի օրերէն իրենց լիբանանցիներ: Լսած եմ պատմութիւններ, թէ ինչպէս որոշ ընտանիներ սփիռուած իրենց բնակարանը փոխած են, որպէսզի «կուսակցական փոխադասնութիւն» (եւ հոսկ՝ ֆիզիկական հաւատարդարի հետ թիրախ) չմնան հակառակորդ կուսակցութեան համակիրներու գեղեցիր ներկայութեամբ բնորոշուող երգանցներու մէջ: Այսպիսով, 1958-ի հեռեւանքներէն մէկն էր Պէյրութի հայաբնակ թաղամասերու «գաղափարական» կամ «քաղաքական մաքրագործումը» (ideological կամ political cleansing)՝ տասնամեակներ առաջ հան եուկոսլաւական պատերազմներուն առընթեր Պէյրութի պատ»: Լսած եմ նաեւ պատմութիւններ, թէ ինչպէս ինչպէսեաններ՝ «իրենց» թաղերուն մէջ պատշաճած են դաշնակցական «փոխադասնութեան» որոշ ներկայացուցիչներ (կամ հակառակը)՝ մինչեւ որ վերջիններս ժամանակ ու յարմար առիթ գտնեն աւելի արագով (եւ իրենց համար կուսակցականներէն հարգաս) երգանցներ տեղափոխուելու: Անգամ մը, վարեցագական ժաղաւէնի մը համար նիւթ փնտռող ֆիլմարարդիչ բարեկամի մը առաջարկեցի այս թեման: Չհամոզուեցաւ: Վերջապէս, թերեւս աւելորդ է ըսել, թէ երբեմ չեմ հանդիպած մէկու մը, որ յոխորտար, թէ ինքնաշան կամ տպանել հրահանգած է այս կամ այն «հակառակորդը», պատճառ դարձած է թաղամասէն անյուսալի այս կամ այն ընտանիքը ակամայ հեռանալ «իրենց» թաղէն, թէեւ կասկած չկայ, թէ այս պարագային նմանաթիւ վկայութիւններու չգոյութիւնը փաստի չգոյութեան հետեւանք չէ:

Եւ հասաւ յիսնամեակը, եւ ինչպէս առէն նշած եմ, շատ ընտանի չունէի բացի այս հրապարակագրական ձեւին դիմելէ: Վստահ եմ, ուրիշներ եւս, շատ հաւանաբար՝ նոյնիսկ ինձմէ աւելի, բազմաթիւ լիբանանցիներ ունին կարդացած 1958-ի հետ՝ ուղղակիօրէն կամ անուղղակիօրէն, բայց չեմ գիտեր, թէ անոնցմէ քանին անհրաժեշտ տիտի գտնէ այս օրերուն անդրադառնալ 1958-ի տխուր դէպքերուն: Անկախ իրենցմէ, սակայն, ես իմ որոշումս առած եմ:

Քանի որ այս յօդուածը լոյս կը տեսնէ Լիբանանէն դուրս եւ զայն կարդացողներ կրնան անմիջական լիբողութիւններ չունենալ 1958-ի դէպքերուն եւ անոնց հետեւանքներուն մասին, հաւանաբար անհրաժեշտ է, որ տամ պատմական համառօտ վերլուծութիւն մը այդ օրերուն տիրող հաղթական իրավիճակին մասին:

1958-ի Հիսնեակական դէպքերը այդ ժամանակ համաշխարհային առումով ընթացող «Պաղ պատերազմին» չնչին մէկ մասնիկն էին, այդ ընդհանուր երեւոյթին հայկական մէկ դրսեւորումը: Ներհայկական հաղթական եւ այլ հակամարտութիւնները բնականաբար նոր չէին, բայց Հայ Յեղափոխական Դաշնակցութեան եւ իր մրցակից կազմակերպութիւններուն, նեռոեալ՝ Սոցիալ-դեմոկրատ հնչակեան կուսակցութեան, Ռամկավար ազատական կուսակցութեան եւ լիբանանահայ համայնավարներու միջեւ անհանդուրժողութիւնը «Պաղ պատերազմի» տարիներուն գաղափարախօսական նոր տարազով սացաւ: Փաստօրէն, Դաշնակցութիւնը լեռնեցաւ Ամերիկայի Միացեալ Նահանգներու եւ արեւմտեան հաղթական կառոյցի, միանոյն՝ խորհրդային Միութեան եւ արեւելքի: Հայկական երկու ճամբարները բացայայտ կը յայտարարէին իրենց հակառակորդները խորտակելու իրենց տրամադրութիւնը:

Մեծաւոր Արեւելքի առաբական երկիրներուն, նեռոեալ՝ Լիբանանի, Սուրիոյ եւ Եգիպտոսի մէջ, ուր հայերը կը բնակէին զանգուածաբար, արեւելք-արեւմուտք պայքարը սացաւ նաեւ տրգանային գունատում՝ կարդացած տարագարդութեան համաշխարհային գործընթացի եւ առաբական կարգ մը երգանակներէ նոր անկախ եւ ոչ յանձնառու արտաքին հաղթականութիւն վարելու ձգտումներուն հետ: «Պաղ պատերազմի» առաբական ու սպիտակեայ առանձնայատկութիւնները այս պայմաններու ներքոյ ստիպեցին բաւական լայն եզրեր գտան: Առաբական Արեւելքի մէջ Դաշնակցութիւնը դարձաւ արեւմտեան, պատերազմական ուժերու դաշնակիցը: Լիբանանի մէջ, այս ուժերու ղեկավարն ու գլխաւոր խորհրդանիշը երկրի նախագահ Քամիլ Շամունն էր, որ 1956-ին ակնյայտ աջակցութիւն շնորհեց Կիլիկիոյ Կաթողիկոսութեան գահին Դաշնակցութեան թեկնածուն բազմեցնելու ի վերջոյ յաջող ճիգերուն եւ առա՝ Իրանի երեք հայ առաքելական թեմերը Կիլիկիոյ կաթողիկոսութեան կցելու գործընթացին: (Համացանցին վրայ զետեղուած A. William Samii-ի «The Shah's Policy: The Role of Savak» ուսումնասիրութեան մէջ նշուած է, թէ Լիբանանէն հայ հոգեւորականներ հովուական աշխատանքի համար Իրան հրաւիրելը Լիբանանի մէջ արեւմտեան ճամբարը ուժեղացնելու Շահի հաղթականութեան տակ մասնիկն էր):

Դաշնակցութեան հակառակորդները, որոնք կը մերժին ընդունել Ջարեհ կաթողիկոսին օրինականութիւնը եւ, հետեւաբար, կը ձգտին դուրս գալ Կիլիկիոյ կաթողիկոսութեան ենթակայութենէն, փորձեցին զօրակցութիւն գտնել Շամունի հակառակորդ առաջադիմական եւ ձախակողմեան խմբաւորումներուն մօտ, թէեւ Լիբանանի կամ գէթ Արեւմտեան հաղթականութեան դէմ աւելի առատականորեն տրամադրուած Սուրիոյ մէջ պատշաճաբար ճանչցուած հայ առաքելական համայնքի կողքին, երկրորդ, պարզապէս կոչուած «անկախ հայ համայնք» սեղծելու իրենց փորձը յաջողութիւն չունեցաւ:

1958-ի մայիսին, երբ Լիբանանի մէջ Շամունի հակառակորդները զինեալ ապստամբութեան դրօշ բարձրացուցին, ներհայկական հակամարտութիւններն ալ աւելի տեսան եւ սացան նոր ոճեր, յաւելեալ եռանգաւորումներ: Միջազգային, միջին-արեւելեան, լիբանանեան եւ սպիտակեայ բեւեռացումները կարծես թէ զիրար կամբողջացնէին եւ այսպիսով գրեթէ որեւէ երբ հակամարտական լուծման համար: Քաղաքացիական պատերազմի օրերուն, Դաշնակցութիւնը կանգնեցաւ Շամունի կողքին, մինչ Դաշնակցութեան հակառակորդները չէին թաղցներ իրենց համակրանքը ապստամբներուն նկատմամբ, նոյնիսկ կը յայտարարէին, թէ զէնքով ու խօսքով կաջակցին ընդդիմութեան: Երբ ապստամբութեան հետեւանքով Լիբանանի օրինական կառավարութիւնը կորսնցուց երկրի ամբողջութիւնը պահելու համար զէնքի ու բռնութեան օգտագործման մենաշնորհը, ներհայկական հակասութիւններն ալ, ի շարս այլոց, վերափոխուեցան փոխադարձ սպանութեանց, տեսակ մը միջի-պատերազմի՝ աւելի մեծ զինեալ բախումներու ծիրէն ներս: Այս ուղղութեամբ, լիբանանահայութիւնը բացառիկ երեւոյթ չէր: Երկրի տարածին զուգահեռաբար կընթանային մի քանի այլ միջի-պատերազմներ եւս: Կենդանորէն, թէ աւելի քան երկու հազար հոգի զոհ գացած են մօտ վեց ամիս տեւած 1958-ի Լիբանանի հաղթականական պատերազմին: Անոնցմէ մի քանի տասնեակը զուտ ներհայկական հակամարտութեանց հետեւանք էին: (Բնականաբար, կային նաեւ հայազգի այլ սպանեալներ, որոնք հայ արձակագէներու զոհ չէին):

Լիբանանահայութիւնը 1920-ական թուականներէն մեր ընդ մեր ակնառեալ եղած է միջկուսակցական ոճիրներու: Այսուհանդերձ, 1958-ի ներհայկական ոճիրները իրենց տարողութեամբ ու յաճախակիութեամբ անհեռատես էին լիբանանեան հանգիստէն ներս եւ թերեւս առ այսօր «անմոռնալի» կը մնան նաեւ համաստիւռեան առումով: Այդ ոճիրներէն առաջինը կան հաւանեալներ էին, բայց այդ օրերու պայմանները թոյլատու էին, որ մարդասպանը իր անձնական ոխը կուսակցական գունատումով կոնկէր եւ ըստ այնմ իր գործած ոճիրը ընդունելի դարձնէր:

Այս յօդուածին մէջ մեզի աբբենական յաջողականութեամբ տիտի ներկայացնեմ 1958-ի զոհերէն քանիներուն անունները, զոր խղճած եմ Լիբանանի մէջ այդ օրերուն լոյս տեսած հայերէն օրաթերթերէն.- Սարգիս Արիաճեան, Գրիգոր եւ Աւետիս Դաւիթեան, Յարութիւն Եաղճեան, Աբրահամ Էմէրճեան, Կարաոթս Թեզեան, Վարդիվար Խաչատուրեան, Մոնայ Խրիմեան, Մկրտիչ Կեօսէրեան, Առաքել Մեսրոպեան, Արտաշէս Մելիքեան, Սիմոն Յակոբեան, Գէորգ Ոսկերիչեան (Շամի), Պետրոս եւ Սարգիս Ցեղիրեանեան, Աւետիս Պարոնեան, Բաբգէն Պոյաճեան, Սահակ Պոյաճեան, Յ. Պողոսեան, Վարդան Սաղոմեան, Թորոս Տեղիրեան, Գէորգ Տէր-Պետրոսեան, Մկրտիչ Քեռեսրեան, Մարգիս Քէօշկերեան եւ Յակոբ Քէօշկերեան:

Այդ ժամանակ ալ, դժբախտաբար, ամէն ոք միայն իր մարգիսը կու լար, իսկ իրականիս թերթի գաղափարակիցներուն կողքէ սպանուածներն նոյն թերթին էջերուն մէջ կը մնային անդէմ եւ անանուն, առաքելագոյնը՝ վիճակագրական տուեալ: Եթէ այս յօդուածը ընթերցողներէն ոմանք գիտեն այլ զոհերու անուններ կամ կրնան արժանահաւաս մանրամասներ հաղորդել վերեւ յիշատակուած զոհերուն սպանութեանց կամ անհետ կորստեան հանգամանքներուն մասին, շատ ուրախ կըլլամ, եթէ կարդ հասցնեն յօդուածագիրին հետ, որ կը յուսայ այդ տուեալները օր մը օգտագործել զուտ գիտական ուսումնասիրութեան մը ծիրէն ներս:

Ի հարկէ ոճիր մը «հենց այնպէս» տեղի չունենար. իրականիս ոճիր ոճրագործի մը ի կարար եղած ոճրարարի մը հետեւանքն է: Ժողովուրդի յիշողութեան մէջ 1958-ի հայ ոճրագործներուն անունները առ այսօր մասամբ թաղած են: Քանի մը տարբեր անուններ լսած եմ տարիներու ընթացքին: Անոնցմէ մի քանիին նոյնիսկ բանաձեւ հանդիպեցայ այդ օրերու լիբանանահայ մամուլի էջերուն մէջ: Մեծ մասամբ, եթէ ոչ ամբողջովին, անոնք այս ախտահէն հեռացած են: Բայց, ի տարբերութիւն զոհերուն, անոնց մասնակի ցանկը հրատարակեցը այս յօդուածին մէջ դաստաւած չէ: Պէտք է յարգել անձերուն կանխավարկածը՝ եթէ մեղադրանը կասկածներու շրջանակին մէջ կը մնայ: Առաւել եւս, անձնուրեան անտեղի լուսաբանակ դէպք չէ շնորհել որեւէ ոճրագործի, եթէ դատապարտը անոր «արժանի» անունը դուրս մնայ ցուցակէն:

Յատակ է, սակայն, թէ այս ոճրագործները սովորաբար անուս (կամ գրեթէ անուս) տարեր եղած են: Մարդկանց յիշողութեան մէջ անոնք ընդհանրապէս մնացած են իբրեւ ալիոլաձի եւ դրաստաորի կերպարներ: Դժուար է ենթադրել, թէ 1958-ը իբրեւ ամբողջական երեւոյթ կազմակերպելը ոճիրներն անմիջականօրէն ի կարար անողներուն հաւանական որոշումը ըլլար՝ ի հեռուստ անոնցմէ իրականիսին ծառայած «կողմին» հաղթական ու կուսակցական ղեկավարութեան: Սակայն, 1958-ով հետաքրքրող դատաբանը հոս է, որ հաւանաբար դիմադրաւ իր մասնագիտական եւ զուտ բարոյական գիտակցութեան դէմ կարգադրութիւնը տալու համար: 1958-ի դէմքերուն հարեւանցիօրէն անդրադարձող կուսակցական գործիչներու յուշերուն մէջ երբեմն կարելի է հանդիպիլ հատուածներու, ուր յուշագրողը ինքզինքին կամ իր մէկ-երկու կուսակիցներուն նախաձեռնողի կամ առնուազն վճռական դեր կը վերագրուի այս ոճիրներուն վերջ տալու ափսեաներուն մէջ: Բնականաբար, այդպիսի տարաբնոյ իրավիճակի մը վերջ տալը խիզախութիւն եւ համբերութիւն պահանջող առաքելութիւն էր, բայց պատասխանին համար նոյնարժէք կարեւոր հարց է, թէ ո՞վ էր յանձնարար եւ ինչ չափով առկայ հակամարտութիւնը այսպիսի լայնաբաւալ արիւնայեղութեան հասցնելու մէջ: Ան ոչնչէ է պարզէ նաեւ, թէ իրավիճակը բարդացողներն ու ոճրարարներուն վերջ տալ ջանացող կուսակցական ղեկավարները տարբեր անձիրէ էին, թէ՝ ոչ:

1958-ին, եկեղեցիս, որ սովորաբար տրամադիր է իմիգիրէ իբրեւ հայ ազգի հիմնական միաւորիչ գործօնը ներկայացնելու, ինքնին առկայ հակամարտութեանց գլխաւոր կռուանները էր: Ուստեղ, եկեղեցականներու կողքէ արձակուած անդորրութեան կոչերը այդ օրերուն օտարու համար ոչ-անկեղծ եւ անհամոզիչ թուեցան: Երբ դէմքերուն ամենաարիանալի օրերէն մէկուն վաղորդայնին, Լիբանանի հայոց առաջնորդ խորէն Բարոյեան սրբազանը խաղաղութեան կոչ մը հրատարակեց, «միա կողմի» մասնագիտ անմիջապէս հարց տուաւ, թէ ան ինչու լռած մնացած էր մինչ այդ, այսինքն՝ երբ (նախա-

Ռաֆայէլ Ալանեան

Զարգացման ուղիներ

Ս էջից

Երկրոդ մեխանիզմը վարչամեքենան է: Տիգրան Սարգսյանը ֆինանսիստ է, իր շուրջ ժողովել է այլ ֆինանսիստների ու ձեռավորել յուրատեսակ մի գործադիր մարմին (մեր կառավարության մեջ դրանք կոչվել են խնամակալություններ), որը սնօրինելու է կառավարը: Սակայն Տ. Սարգսյանը լոկ «հաշվապահ» չէ, նա ունի քեռության եւ ազգի զարգացման հեռանկարների վերաբերյալ իր տեսլականը, որը նախեմ վարչամեքենայությունը շարադրել է մի քանի տեսական հոդվածներում: Այս իմաստով նա ոչ միայն Ս. Սարգսյանի հանախոհն է, այլեւ մինչեւնույն գաղափարաբանության, միեւնույն փիլիսոփայության կողը:

Տնտեսական ռազմավարության մշակման առաջնության դափինին, սակայն, չի պատկանում միայն նախագահին ու վարչամեքին, որպիսեւ դափնու խնդիր առհասարակ գոյություն չունի: Պարզապես կան նաեւ արտասահմանում բնակվող ազգակիցներ՝ բարձրագույն պրոֆեսիոնալներ, ովքեր ուսումնասիրել են Հայաստանի ողջ տնտեսությունը եւ մասնագիտ արել գերակայությունները՝ Սփյուռքի շնորհիվ, տեղեկատվական տեխնոլոգիաներ, առողջապահություն, զբոսաշրջություն: Այսինքն, նախագահի առաջնությամբ կազմավորվել է մեքի ու գործի մարդկանց մի թիմ, որի անդամակցության դրները բաց են, եւ որը ձեռնամուխ է եղել վարչամեքի բառով՝ հավակնոտ, իսկ պատգ հայերենով՝ հաճարձակ ծրագրերի իրականացմանը:

Ինչ հեռեւանքներ կարող են լինել:

Ներդեռական ենթատարեզ

Ս.Սարգսյանը խոսում է նախագահական «լեզվով»՝ բանաձեւումներով, եւ հարկ է, որ թե նրա հանակիրները, թե հակակիրները, թե չեզոքները խորամուխ լինեն երկրի ղեկավարի հայտարարությունների մեջ, որպիսեւ ինչ անելու է՝ այն էլ ասում է: Դիցուք, երբ հրապարակում է, թե հինգ տարի անց ածնն երիտասարդ հնարավորություն կունենա բնակարան ու ավտոմեքենա ձեռք բերել, դա նշանակում է, որ երիտասարդը կունենա աշխատանք, վաստակ եւ ունեցվածք ձեռք բերելու հնարավորություն: Դա նշանակում է, որ էապես կբարձրանա կենսամակարդակը: Մեկ դար առաջ Մասսաչուսետսի նկարիչներից մեկի վանահայր Լոուենսը ազդարարեց «Նյութական բարեկեցության զարգացումը նպաստում է, որ ազգային խառնվածքը դառնա ավելի մեղմ, ավելի զվարթ, ավելի անհահախնդիր, ավելի հիստնեական»: Ս.Սարգսյանը սոսն է ձգում: Որպիսեւ որեմն էլ չընդունենք մարխիզմը, այդուհանդերձ՝ կեցությունն է որոշում գիտակցությունը: Բարձրացնելով կենսամակարդակը՝ նախագահը կունի բազաթիվ եւ, ի շարս, երկու առավել ցցուն խնդիրներ:

Առաջինը ժողովրդավարության հիմնահարցն է: Երբ նախագահը հայտարարում է, թե՝ Հայաստանը շարունակելու է ընթանալ ժողովրդավարացման ուղիով, կարծում եմ նկատի ունի այն դրությը, որ ժողովրդավարության մակարդակը ուղիղ համեմատական է հասարակության կենսամակարդակին: Առիթ երկիրը չի կարող հարուս ոչ-ժողովրդավարություն ունենալ: Աշխարհում կան երկրներ, որոնք իրենց տարբերական անկանման մեջ ունեն «ժողովրդավարական» բառը, բայց դա հո չի նշանակում, թե դրանք են հիրավի ամենաժողովրդավարականները:

Երկրորդը ներկայիս գրոզամին, ինքնահավան եւ ինքնաենթադրությունից լիովին զուրկ ընդդիմության սոցիալական ոլորտի հեռի վերացումն է: Նյութական բարեկեցության բարձրացումը դժվար զանգվածին կիսի հանրահավքից եւ կդարձնի «ավելի մեղմ, ավելի զվարթ, ավելի անհահախնդիր, ավելի հիստնեական»:

Արտաքին քաղաքական ենթատարեզ

Իսկապես ոչ-ոչ ոչ ոչ

«Կովկասի կայունության եւ համագործակցության ոլորտային» Հայաստանի մասնակցությանը կողմ է նաեւ նախագահ Գյուլը

Իսկ Թուրքիայի արտգործնախարարությունը նպատակահարմար է համարում ֆուտբոլային հանդիպման համար Երեւան գործուղել ապորտի գծով պետնախարարին

«Կովկասի կայունության եւ համագործակցության ոլորտային» թուրքական նախաձեռնության մասին վարչապետ Էրդողանը հրապարակային առաջին հայտարարությունն արեց օգոստոսի 13-ին: Այնուհետեւ նա Մոսկվա, Թբիլիսի, Բաքու կատարած այցերի ընթացքում ոլորտին միանալու առաջարկով դիմեց ռուսական, վրացական, ադրբեջանական կողմերին, ընդգծելով այս նախաձեռնության մեջ Հայաստանի ներգրավվման անհրաժեշտությունը:

Վրաստանն ու Ադրբեջանը դրական արձագանքեցին Թուրքիայի վարչապետի առաջարկին, իսկ Ռուսաստանը, ինչպես օգոստոսի 21-ի համարում նշել է «Ռադիկալը», նախ լուրջ չընդունեց առաջարկը, ապա դա վերագրեց ԱՄՆ-ի նախաձեռնությանը եւ կասկածանքով վերաբերվեց: Սակայն ոլորտին պատասխանելիս Վաշինգտոնի հակազդեցության պայմաններում Մոսկվան վերանայեց իր դիրքորոշումը եւ հետզհետե սկսեց էրդողանի առաջարկին աջակցելու պատրաստակամություն հայտնել, պայմանով, որ ինքը որոշիչ դեր խաղա այս կառույցում:

Թուրքիայում միանշանակ չեն «Կովկասի կայունության եւ համագործակցության ոլորտի», առավել եւս այս ոլորտին Հայաստանի մասնակցության նկատմամբ մոտեցումները: Այդ իսկ պատճառով երկրում ափսոսալ բանավեճեր են ծավալվում ոլորտի իրատեսականության, դրան Հայաստանի մասնակցության նպատակահարմարության, ինչպես նաեւ այս նախաձեռնության ցուցաբերման հնգաքայլերի շուրջ:

«Մարմարա» հանձնարարի պրոֆ. Բուրու Էրսանը, ինչպես օգոստոսի 21-ին կայքէջում նշել է «Բիանետը», հիմք ընդունելով Ադրբեջանի, Հայաստանի եւ Վրաստանի միջեւ առկա տարաձայնությունները, նշել է, որ չկան ոլորտի ստեղծման համար անհրաժեշտ նախադրյալներ, ապա եւ ավելացրել է. «Ռուսաստանի օտարման դեմքում անհնար է այսպիսի կառույցի ստեղծումը: Ռուսաստանն ամենեին չի պատրաստվում նախաձեռնությունը Արեւմուտքին զիջել Կովկասում: Որեւ էլ նա դրական արձագանքի այս ոլորտին, ակնհայտ է, որ չի աջակցի ԱՆՏՕ-ի եւ ԱՄՆ-ի ուղեցույցում գտնվող ոչ մի կառույցի ստեղծումը»:

«Գորբ գայլերի» խոսափող «Ենի չաղի» օգոստոսի 20-ի համարի վկայությամբ, Հայաստանին այս կառույցում ընդգրկելու էրդողանի պատրաստակամությանը բուռն հակազդեցություն է ցույց տվել Ազգայնական շարժում կուսակցության փոխնախագահ Օրքայ Վուրալը: Նա ասել է. «Թող Հայաստանը դադարեցնի Ղարաբաղի օկուպացիան եւ հրաժարվի ցեղասպանության անհիմն մտադրություններից: Թուրքիան չպետք է ծուղակն ընկնի, խաղաղության եւ կայունության համար անհրաժեշտ է, որ Հայաստանը վերանայի Անկարայի եւ Բաքվի նկատմամբ ողջունած բռնապետական խաղախականությունը»: Նրան հավելել է «Մայր հայրենիք» կուսակցության նախագահ Ուղուր Մուքջունը, ասելով. «Հայաստանի հետ խնդիրները զգացական չեն: Կան տարածքի նկատմամբ հավակնություններ, հետեւաբար ծիծաղելի է նրա հետ դաշինք կազմել»:

Նույն օրվա համարում «Ենի չաղը» «Կովկասի կայունության եւ համագործակցության ոլորտ» ստեղծելու վարչապետ էրդողանի նախաձեռնությունը համարել է Եվրոմիության պատասխան: Հաձենայն դեպս, ոլորտի հարցում Թուրքիայի վարչապետը սպասել է Մոսկվայի, Թբիլիսիի եւ Բաքվի հավանությունը: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա էրդողանը, «Ռադիկալի» վկայությամբ, արտգործնախարար Ալի Բաբաջանին կարգադրել է դրա առնչությամբ համապատասխան ափսոսանքներ սկսել Երեւանի հետ: Ըստ թուրքական թերթի, ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովի հետ հանդիպմանը Բաբաջանը Ռուսաստանին առաջարկելու է ակտիվ դեր ստանձնել այս ոլորտում եւ համոզել Հայաստանին, որ ներգրավի դրա ծեւավորման ափսոսանքներում:

Եթե Բաքաջանի մոսկովյան հանդիպումը Լավրովի հետ հանգեցնի դրական արդյունքի, ապա Անկարայի բարձրաստիճան դիվանագետներից Չեփհոզն այդ հարցով կդիմի Հայաստանի արտգործնախարարության ղեկավարներին, սակայն բուն բանակցությունները կծավալվեն սեպտեմբերի երկրորդ կեսին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի շրջանակներում: «Ռադիկալը» նշանակում է, որ Բաբաջանը ասամբլեայի ընթացքում կհանդիպի ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանին եւ իր գործընկերոջը կհրազեկի «Կովկասի կայունության եւ համագործակցության ոլորտի» գլխավոր սկզբունքների մասին եւ կառաջարկի միանալ այս նախաձեռնությանը:

Ի դեմ, ոլորտին Հայաստանի մասնակցության վարչապետ էրդողանի նախաձեռնությունը օգոստոսի 21-ին պատասխանել է նաեւ նախագահ Գյուլը: Անկարայում Ռումինիայի նախագահի հետ համատեղ ասուլիսում լրագրողի «Կովկասի կայունության եւ համագործակցության ոլորտի» առնչությամբ Հայաստանին դիմե՞լ եք» հարցին Թուրքիայի նախագահը պատասխանել է. «Նախատեսվում է այս ոլորտում ընդգրկել նաեւ Հայաստանին, քանի որ նա հարավկովկասյան երկիր է: Եթե ակնարկը առկա խնդիրների մասին է, ապա մենք նրան հրավիրել ենք, որ նույնպես դրանց կարգավորմանը: Շարունակվում են Հայաստանի հետ այդ ուղղությամբ ծավալվող հանդիպումներն ու կապակցվում համապատասխան ափսոսանքներ»:

Խնդիրը, սակայն, սոսկ «Կովկասի կայունության եւ համագործակցության ոլորտին» Հայաստանի մասնակցությունը չէ, այլ Հայաստան-Թուրքիա ֆուտբոլային հանդիպման համար Արդուլլահ Գյուլի Երեւան ժամանելու հավանականությունը: Դրա առնչությամբ Թուրքիայի արտգործնախարարությունը գրավոր կարծիք է ներկայացրել նախագահի Ցանկալի նստավայր, որտեղ մասնավորապես ասվում է. «Թեեւ նախագահ Գյուլի այցը մեծ ազդեցություն կգործի եւ այդ առումով կլինի դրական, սակայն Երեւանը դեռեւս չի կատարել այդ ժեստին համապատասխան ընդառաջ քայլը, հետեւաբար ամենատրամաբանական «միջին» քայլը ֆուտբոլային հանդիպումը դիտելու համար ստորեւ գծով պետնախարար Մուրատ Բաշեսքիոզլուի գործուղումն է Երեւան»:

ՀԱՅԿԱՆ ՇԱՀԲԱԶԵՆ

ԱՄՆ դեսպանը արդարացնում է Մոսկվայի քայլերը

Ռուսաստանում ԱՄՆ նոր դեսպան Ջոն Բայերլին հայտարարել է, որ Հարավային Օսիայում ռուսաստանցի խաղաղապահների վրա կատարված հարձակմանն ի պատասխան ՌԴ զինված ուժերի ձեռնարկած գործողությունը միանգամայն հիմնավորված էր: Դեսպանի հարցազրույցը տպագրվել է օգոստոսի 22-ին «Կոմերսանտ» թերթում: Դա ռուսական լրատվամիջոցներին դեսպանի տված առաջին հարցազրույցն է:

Միեւնույն ժամանակ Բայերլին անթույլատրելի է համարել Վրաստանի տարածքում ռուսական զորքի ներկայությունը եւ արտահայտվել է ռուս-վրացական հաշտության համաձայնագրի շուտափույթ կատարման օգտին:

Հարավային Օսիայի հնարավոր անկախացման կապակցությամբ դեսպանն ասել է, որ Վրաստանի տարածքային ամբողջականությունը ճանաչված է ըստ միջազգային իրավունքի:

Նրա կարծիքով, Կոսովոն հատուկ դեպք է, քանի որ այնտեղ կատարվել են էթնիկական զտումներ:

Դեսպանը հայտարարել է, որ ԱՄՆ-ը Վրաստանին «համառորեն հորդորել էր» Հարավային Օսիայում չդիմել ակտիվ գործողության: Բայերլին Մոսկվայում պատասխանատու է այս տարվա հուլիսից:

Ռուսաստան-ՆԱՏՕ համագործակցություն չիք

1-ին էջից

Այս նույն խնդրին է անդրադարձել Human Rights Watch իրավապատասխան կազմակերպությունը, հայտարարելով, որ շատ միջոցներ պետք է ձեռնարկել Վրաստանի տարածքի ականազերծման ուղղությամբ: Ընդ որում, Վրաստանում կիրառված կասետային ականներն արգելված են աշխարհի 107 երկրներում, որոնց թվում չեն ոչ Վրաստանը, ոչ Ռուսաստանը:

Վերջին օրերի քննարկումների հիմնական թեմա դարձած ռուսական զինուժի միավորումների դուրսբերումն էլ կարծես երեկ տեղաշարժ է ունեցել: Մասնավորապես, ըստ վրացական լրատվամիջոցների, ռուսական զորքերը դուրս են եկել Խաշուրիից, իսկ ըստ ՌԴ ԶՈՒ գլխավոր շտաբի ղեկավարի տեղակալ Անատոլի Նոգովիցինի, Ռուսաստանի միջին գոտում գտնվող իրենց մշտական տեղակայման վայր են վերադարձել ռուսական 3 կործանիչ եւ 25 գրոհային ինքնաթիռներ: Նոգովիցինը չի ցանկացել, թե արդյո՞ք էլի ինքնաթիռներ են մնացել ռազմական գործողությունների տարածքում:

Թերեւս երեկվա տեղեկություններից ամենահորչիչն այն է, որ ռուսական զինուժը սկսեց դուրսբերումը նաեւ Գորի հարաւից, որտեղ ռուսական զինված միավորումները գտնվում էին ռազմական գործողությունների հենց սկզբից: Այստեղ ռազմական գործողությունների ցածրադիր հարթը ոչ միայն գրեթե ամբողջությամբ լիված է, այլեւ ավերված, եւ ռազմական ներկայության պատճառով անհնար է դարձել տրանսպորտային հաղորդակցությունը Արեւմտյան Վրաստանի եւ Թբիլիսիի միջեւ ամենահարմար ու մոտ ճանապարհով:

Առավել հետաքրքրական է, թե ինչպես են հարավօսական հակամարտության գոտում հայտնված ուժերը փորձում բաժանել ազդեցության գոտիներ: Ռուսաստանը հայտարարում է, որ բնավ էլ չի պատրաստվում Վրաստանի հետ ինքնակել «բուֆերային գոտիների սահմանները», որտեղ պատրաստվում է լրացուցիչ անցակետեր կազմակերպել: Ավելին, Արեւմտյան Վրաստանում գտնվող Սենակի հաղթի աերոդրոմն էլ, որ շատ մոտ է արխազական հակամարտության գոտուն, ըստ ռուսական կողմի, «մտնում է խաղաղապահների պատասխանատվության գոտու մեջ»:

Վրաստանը գտնում է, որ այդ իրավունքը տարածվում է միայն ցխինվալյան տարածաշրջանում 15 կմ շրջագծով: Վրաստանի արտգործնախարար Իկա Տկեշելաշվիլին ընդհանրապես Ռուսաստանի կողմից խաղաղապահի առաքելության իրականացումն է որակել անընդունելի, ավելացնելով, որ մինչեւ Ռուսաստանը չկազմալուծի նոր ներդրված բլոկ-անցակետերը, Վրաստանում կբարունակի գործել ռազմական դրությունը, որ երկրի նախագահի հրամանագրով մտցվեց օգոստոսի 9-ին՝ 15-օրյա ժամկետով:

Ինչեւէ, երեկ երեկոյան Ռուսաստանը, ի դեմս ՌԴ գլխավոր շտաբի, հայտարարեց բուֆերային գոտիների սահմանները: Մասնավորապես, շտաբի ղեկավարի տեղակալ Նոգովիցինի ներկայացմամբ, աբխազական ուղղությամբ այդ գոտին կանցնի Նաբադայով, Չալադիդիով, Սենակիով, Կվիրայով, Խուդոնինով, Գենագուալով, Ցիկմուրով, Օչամչիրով, Անակլիայով: Հարավօսական ուղղությամբ բուֆերային գոտու սահմանը կկազմեն Պերեւին, Գոգորան, Ալին, Վարիանին, Իկոտին, Ցիարան, Պագան: Այս սահմանների նշումը կարեւոր է նրանով, որ այս գոտու մեջ կտեղակայվեն ռուսական զինուժի միավորումները: Վրացական կողմն իր բողոքն է հայտնել այս առնչությամբ, նշելով, որ այդ նոր սահմաններում են հայտնվում ավելի քան 50 վրացական գյուղեր, որ նախկինում հակամարտության գոտիների մաս չէին կազմում:

Վրաստանը հույս է հայտնել, թե միջազգային հանրությունը թույլ չի տա ռուսական նոր անցակետերի ձեւավորումն ավելի ընդլայնված արեալում, քան հակամարտության գոտիներն էին: Ինչպես ասում են, հուսալը վատ չէ, հատկապես որ հույսը վերջինն է մեռնում:

Ֆրանսիացիները դահանջում են Աֆղանստանից հանել ֆրանսիական զորքը

Ֆրանսիայում անցկացված հարցման տվյալները վկայում են, որ երկրի բնակչության մեծ մասը հանդես է գալիս Աֆղանստանից ֆրանսիացի զինծառայողների դուրսբերման օգտին: Ֆրանսիացիների 55 տոկոսը պահանջում է հայրենակիցներին դուրս բերել Աֆղանստանից: Նրանց կարծիքով, «Ֆրանսիան խրվում է մի հակամարտության մեջ, որի վրա ինքը չի կարող ազդել»:

Հարցման մասնակիցների 36 տոկոսի կարծիքով, զորքը պետք է թողնել Աֆղանստանում, քանի որ մասնակցում է միջազգային հակահաբեկչական պայքարին:

Ինչ վերաբերում է Աֆղանստանում իրադրության կարգավորման հարցում նախագահ Նիկոլա Սարկոզիի վարած քաղաքականությանը, ֆրանսիացիների դիրքորոշումն այնքան էլ հստակ չէ: Հարցման մասնակիցների 48 տոկոսը դրական գնահատական է տվել Սարկոզիի քաղաքական գծին, մինչդեռ 46 տոկոսը հակառակ տեսակետն է արտահայտել:

«Լիբերասիոն» թերթը գրում է, որ Աֆղանստանում անվտանգության միջազգային ուժերին ֆրանսիական զորաբաժնի մասնակցության հարցը բուռն վիճաբանությունների թեմա դարձավ օրերս այդ երկրում ֆրանսիացիների կրած ծանր կորուստներից հետո: «Ազգը» տեղեկացրել է, որ երկուշաբթի օրը թալիբների դեմ մղված մարտերի ընթացքում սպանվեցին 10 եւ վիրավորվեցին 21 ֆրանսիացի զինծառայողներ: Դա ֆրանսիական բանակի ամենամեծ կորուստն է 1983-ից ի վեր, երբ Բեյրութում ահաբեկչությունից զոհվեցին 58 դեսանտայիններ:

Ի դեմ, թալիբ գրոհայինների հարձակումը համընկավ ֆրանսիական հավելյալ ստորաբաժանում Աֆղանստան ուղարկելուն: Հինգշաբթի օրը նախագահ Սարկոզին Աֆղանստանում հարգանքի տուրք մատուցելով զոհված ֆրանսիացի զինծառայողներին, հայտարարեց, թե Ֆրանսիան «կշարունակի ահաբեկչության դեմ պայքարելու ափսոսանքը»:

Ֆրանսիայի ճախակողմյան կուսակցությունները քննադատել են նախագահի դիրքորոշումը եւ պահանջել են անցկացնել խորհրդարանի արտաքին գործերի եւ պաշտպանության հանձնաժողովների նիստ: Սոցկուսի առաջին քարտուղար Ֆրանսուա Օլանդի խոսքերով, հարկավոր է ճշտել միջազգային ուժերի կազմում ֆրանսիացի զինծառայողների գործողությունների «նպատակներն ու ձեւերը»:

Պակիստանը նոր նախագահ կունենա սեպտեմբերի 6-ին

Պակիստանի ընտրությունների ազգային հանձնաժողովի տարածած հաղորդագրության համաձայն, երկրի նոր նախագահ անունը հայտնի կդառնա սեպտեմբերի 6-ին: Նախագահական ընտրությունների օրվա վերաբերյալ որոշումը երեկ ընդունվել է այն կապակցությամբ, որ օգոստոսի 18-ին ինքնակամ հրաժարական է տվել նախագահ Փերվեզ Մուշարաֆը:

Երկրի սահմանադրության համաձայն, պետության նոր ղեկավարը պետք է ընտրվի 30 օրվա ընթացքում, երկրի չորս նահանգների օրենսդիր ժողովների եւ խորհրդարանի պատգամավորների քվեարկության արդյունքների հիման վրա:

Հայադարձության խնդիրը այսօր առաջնային է

«Մեկ ազգ, մեկ մշակույթ» համահայկական մշակութային 3-րդ փառատոնի 16 երկրներից ժամանած ղեկավարությունների ղեկավարների հետ երեկ առաջին գործերի նախարարությունում կայացավ Սփյուռքի հարցերով պետական կոմիտեի նախագահ Հրանուշ Հակոբյանի հանդիպումը: Վերջինս ներկայացրեց կոմիտեի կառուցվածքը, համատեղ իրականացվելիք ծրագրերը, որտեղ մշակվել են հատուկ ոազմավարություն՝ հայապահպանման, հայադարձության եւ այլ հարցերի ուղղությամբ: Կոմիտեի նախագահը նաեւ նշեց, որ միասնական ուժերով պետք է մարդահամար անցկացնել՝ հայտնաբերելու որ երկրներում, որ բնագավառներում հայերն ինչ զբաղվածություն ունեն:

Իսկ «Արի տուն» ծրագիրը նպատակ ունի աշխարհասփյուռ հայ երիտասարդներին գոնե մեկ անգամ բերել հայրենիք: Նախատեսվում է տարին մի քանի անգամ հեռուստակամուրջներ, տեսակոնֆերանսներ անցկացնել, 6-7 լեզվով էլեկտրոնային թերթեր հրատարակել:

Հրանուշ Հակոբյանը, կարեւորելով փառատոնի գաղափարը, ասաց. «Ամեն փառատոն նոր լիցք ու շունչ է հաղորդում: Այս փառատոնը որքան էլ դրական կողմեր ունի, միեւնույն է գերն չէ նաեւ բացասականից: Մեկ մշակույթ բառին այնքան էլ կողմ չեմ, քանի որ տարբեր երկրներում ապրելով, դուք դառնում եք նաեւ այդ երկրի մշակույթի կրողը, ուստի պետք է բոլոր բնագավառներում մենք հատուկ մասնագետներ վերապատրաստենք»:

Հայաստան-Սփյուռք հետագա ծրագրերի շուրջ կարծիք հայտնելու, առաջարկություններ ներկայացնելու փոխարեն ներկաները սեփական կենսագրությունը բարձրաձայնեցին եւ փառատոնին մասնակցության հրավերի հնարավորություն հայտնեցին, մոռանալով բուն նպատակը՝ ծրագրերն հնարավորին մշակված եւ արդյունավետ դարձնելը: Այնուամենայնիվ նաեւ առաջարկ եղավ. «Հայորդի» համույթի տնօրեն Սամվել Հարոյանը (ՌԴ) կարեւորեց ֆինանսատնտեսական խնդիրներն ու առաջարկեց փառատոնի բյուջեն լցնել նաեւ դրսի միջոցներով, որպեսզի հնարավոր լինի որակական առումով շատ ավելի բարձր պարային համույթներ հրավիրել փառատոնին մասնակցելու:

Ս. Մ.

ՓԵՐՈՍՏՈՒ

Մաեստրո Չեմիջյանը հանդիպեց սփյուռքից ժամանած խմբավարներին

Փառատոնի շրջանակներում երեկ ՀՀ պետական ակադեմիական երգչախմբի դիրիժոր, մաեստրո Հովհաննես Չեմիջյանը հյուրընկալեց սփյուռքից ժամանած խմբավարներին: Հյուրերի թվում էին Սամբուլի (Թուրքիա) «Լուսավորչի դպրաց դաս» երգչախմբի ղեկավար Հակոբ Մամիկոնյանը, Մոսկվայի (ՌԴ) «Վերածնունդ» երգչախմբի ղեկավար Սմբատ Խալաթյանը, Թեհրանի (ԻԻՀ) «Արարատ» երգչախմբի ղեկավար Արտեմ Խալաթյանը, Թավրիզի (ԻԻՀ) Ասրոյանական Հայոց թեմի «Կոմիտաս» վոկալ քառյակի ղեկավար Վարդան Վահրամյանը եւ Թեհրանի մանկական երգչախմբի ղեկավար Արփինե Հարությունյանը: 1937-ին հիմնադրված Կարելիայի գործունեության մասին մանրամասն տեղեկություններ տվեց երգչախմբային ընկերության նախագահ Դավիթ Ղազարյանը: Մաեստրո Չեմիջյանը բարձր գնահատեց «Մեկ ազգ, մեկ մշակույթ» փառատոնի անցկացումը, նաեւ այն հնարավորությունը, որ ընձեռվել է խմբավարներին մասնակցել վարժեության դասերին: Մաեստրոն նշեց. «Մի քանի ժամվա ընթացքում հնարավոր չէ վարժեության դասեր անցկացնել հասկացողությամբ խմբավարների համար, ուստի ես որոշեցի ձեզ համար փոքր համերգ-փորձ անցկացնել, որը, կարծում եմ, շատ օգտակար կլինի»:

71 տարվա երգչախումբը հանրապետությունից դուրս եկել է 814 համերգ՝ 40-ից ավելի լեզուներով ներկայացրել է տարբեր ժամանակների կոմպոզիտորների գործերը: Խմբավարներն ունկնդրեցին Տիգրանյանի «Անուշ» օպերայի նախերգանքը, Կոմիտասի «Պատարագից» մի հատված, «Կալի երգը», «Գութանի երգը», «Երգաբարը» եւ Չուխաջյանի «Կարինե» օպերայից հատվածներ: Խմբավարները հրաշալի տպավորություններով, իրենց հուզող մասնագիտական հարցերի պատասխաններ սանալուց հետո իրենց խորին շնորհակալությունը հայտնեցին մաեստրո Չեմիջյանին ու նվիրեցին իրենց երգչախմբերի ալբոմներն ու ձայնագրությունները:

Հրաշալի տպավորություններից հետո նրանք շտապեցին Կոմիտասի անվան կամերային երաժշտության տուն՝ Սամբուլի «Լուսավորչի դպրաց դաս» երգչախմբի մենահամերգին:

Հիշեցնենք նաեւ, որ այսօր, ժամը 20.00-ին Հանրապետության հրապարակում կկայանա «Մեկ ազգ, մեկ մշակույթ» համահայկական երրորդ մշակութային փառատոնի հանդիսավոր փակման արարողությունը:

ՄԱՐԻՆԵՍԻ ՄԱՍԻՍՅԱՆ

«Նահապետ» հունգարերեն թարգմանությամբ

Ազգագրագետ, թարգմանիչ Պիրուզկա Ջոյան Կրայիրը 1991-ից մեկ տասնամյակ բնակվել է Երեւանում եւ որպես գիտաշխատող աշխատել ՀԳԱ-ի պատմության ինստիտուտի գաղթավայրերի բաժնում: Տարիներ անց՝ Հունգարիա տեղափոխվելուց հետո էլ Պիրուզկան շարունակել է ակտիվորեն զբաղվել հայագիտական եւ հայաբանական աշխատանքով: Պիրուզկան վերջին երկու տարիներին Հայկա Ջոյարի «Նահապետ» գրքի թարգմանել է հունգարերեն:

Երեկ «Մեկ ազգ, մեկ մշակույթ» ծրագրի շրջանակներում կայացավ գրքի շնորհանդեսը: «Այստեղ անցկացրած մեկ տասնամյակի ընթացքում շատ սիրեցի հայ ժողովրդին եւ «Նահապետ» գրքի թարգմանությամբ ցանկացա օտարերկրացիներին ցույց տալ իսկական հայ ժողովրդի կերպարը», ասաց թարգմանչուհին: Պիրուզկան խոստովանում է, որ առաջին անգամ տեսնելով Հեմրիկ Մայլանի «Նահապետ» ֆիլմը՝ շատ է ազդվել Սոս Սարգսյանի հրաշալի դերակատարումից: «Այս հանճարեղ գործը պատմում է մի մարդու մասին, որ ուրիշ վայրում, փողոցների վրա փորձում է ինչ-որ բան կառուցել: Սա հրաշալի օրինակ է եվրոպական ժողովուրդների համար: Ինձ զգեցնեց հայ ժողովրդի կամքի ուժն ու հաստատությունը», ասաց նա:

Թուրքագետ Ալեքսանդր Սաֆարյանը կարեւորեց այն փաստը, որ օտար լեզվով թարգմանված գիրքը պատմում է եղեռնի մասին: Ժուռնալիստների միության նախագահ Աստղիկ Գետոյանն էլ բարձր գնահատեց թարգմանության ընկալելի լեզուն ու ոճը: «Նահապետը» թարգմանվել է բազմաթիվ լեզուներով, սակայն սա հունգարերեն թարգմանության առաջին փորձն է, որ պսակվեց հաջողությամբ: Հատկանշական է, որ թարգմանչուհին էլ բարձր արժանիքների տեր անձնավորություն է ու օտարերկրացի լինելով հանդերձ կարողացել է լիովին ըմբռնել գրքի գաղափարը: Պատմեց, որ հունգարացիները մեծ հուզմունքով են կարդացել գիրքն ու նա սացել է բազմաթիվ նամակներ, ինչը շատ հաճելի անակնկալ էր», ասաց Հայկա Ջոյարի դուստր՝ Նվարդ Ջոյարը:

Հ. Հ.

ՀԱՅԱՐԱՍԱՐԴԵՐ

«Ջազի լեռին»՝ Բոստոնում

Արդարացիորեն նախկին խորհրդային միությունում «Ջազի առաջին լեռի» հորջորջված Տաթեւիկ Հովհաննիսյանը սեպտեմբերի 5-ին Բոստոնի ամենահայեցի ջազ ակումբներից մեկում «Ռեգաթաբառում» հանդես է գալու իր ջազային քառյակի հետ, տեղեկացնում է «Արմինյն միրոր-սփեթեյթր» շաբաթաթերթը: Դա լինելու է առաջինը համերգային շրջագայությունների շարքի, որը նրան տանելու է նաեւ Նյու Յորք՝ մասնակցելու Լինկոլն կենտրոնի «Դիզի» ակումբում նախատեսված Դիեզ Կոուլի «Կանայք ջազում» 4-րդ տարեկան փառատոնին, եւ ապա Հայաստան՝ մասնակցելու, հայկական ջազի 70-ամյակին նվիրված հանդիսություններին:

Սեպտեմբերի 5-ին Տաթեւիկին ընկերակցելու են համաբխարհային ճանաչման արժանացած երաժիշտներ եւ դաշնակահարներ, ինչպիսիք են Բոբ Ալբանեզը, Ջո Ֆիցջերալդը, Դեյվիդ Միոը եւ Ջոն Բաբայանը: Ծրագիրը ընդգրկելու է հայկական, ամերիկյան եւ բրազիլական ջազային կոմպոզիցիաներ:

Հ. Ս.

Մշակութային երկխոսություն՝ երիտասարդների միջոցով

«Մշակութային երկխոսություն» երիտասարդական փառատոնը երեք տարվա կենսագրություն ունի: Այն ընդգրկված է ԱՊՀ միջոցառման ծրագրում, իսկ 2007-ին անցկացված «Բոլորս տարբեր, բոլորս հավասար» փառատոնի ընթացքում արժանացել է Եվրախորհրդի մրցանակին: Ծրագրի նպատակն է աջակցել միջմշակութային երկխոսությանն ու ուսուցմանը, մշակութային բազմազանության պահպանմանը եւ այդ գործընթացում երիտասարդների մասնակցության եւ համագործակցության զարգացմանը: Օգոստոսի 21-27-ը ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարության, «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոն» կազմակերպության եւ «Համահայկական երիտասարդական միջազգային կենտրոն» հիմնադրամի հովանավորությամբ Ծաղկաձորում կանցկացվի «Մշակույթների երկխոսություն» երիտասարդական երրորդ միջազգային փառատոնը, որին մասնակցում են տասնհինգ երկրի եւ երկու համայնքի ավելի քան հարյուր երիտասարդ: Փառատոնի ութ օրվա ընթացքում երիտասարդները մրցույթային կարգով կներկայացնեն ազգային մշակույթի առանձնահատկությունները, թեատրը, երգն ու պարը, խոհանոցը, իսկ լավագույնները կարժանանա մրցանակների:

Ցինական պատվիրակության տարվա առանձնանում են հատկապես ճարտարապետական կոթողները ներկայացնող լուսանկարները, չինական տարազներն ու կենտրոնում կախված Օլիմպիականի դրոշը: Քսանհինգամյա Լիչենը վստահեցնում է, որ չինական հնագույն եւ հարուստ մշակույթը կոգեւորի ու կհետաքրքրի փառատոնի մասնակիցներին: «Կներկայացնենք ճարտարապետական կոթողներ, հուշարձաններ, չինական ավանդական պարերն ու Ծաղկաձորում հավաքված երիտասարդությանը կծանոթացնենք Ուշու մարզաձեւի նրբություններին», ասաց նա: Հայկական պատվիրակությունը ներկայացնում են Հայաստանի եւ Արցախի երիտասարդները՝ հերթական անգամ ապացուցելով իրենց միասնականությունն ու համախմբվածությունը: Հայկական տաղավարից անդադար հնչում էին դուդուկի ու դհոլի ելեւէջները, հնդկուհիներն էլ ներկայացնում էին յոգայի գաղտնիքներն ու հնդկական պարի առանձնահատկությունները: ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի փոխնախարար Արթուր Պողոսյանը նշում է, որ կառավարությունը տասնութ միլիոն դրամ է հատկացրել փառատոնի կազմակերպչական խնդիրները հոգալու համար: «Շատ կարեւոր է ժողովրդական դիվանագիտությունը, երբ ազգերը ճանաչվում են մշակույթի, արվեստի լեզվով: Այս առումով շատ է կարեւորվում երիտասարդության շփումները տարբեր ազգերի ավանդույթներին, մշակույթին ու պատմությանը», փառատոնի բացման արարողության ժամանակ ասաց փոխնախարարը:

Փառատոնի կազմակերպիչներից Արեգ Թադեւոսյանն էլ հավելում է, որ միջոցառման ընթացքում առանձնահատուկ ուշադրություն են դարձնելու խաղաղության գաղափարին, իսկ ԱՊՀ երկրների երիտասարդական փառատոնների կայքեջում միջոցառումը ներկայացված է, որպես գլխավոր իրադարձություն, ինչն արձանագրում է փառատոնի հաջողված լինելու փաստը:

«Նայում եմ երկրների դրոշակներին, հավաքված երիտասարդությանն ու համոզվում, որ դրոշակներն ու ազգերը տարբեր են, սակայն մարդիկ նույն են, իսկ մշակույթը մոտեցնում է մարդկանց: Վաղվա մշակութային կյանքի մթնոլորտը ձեր սեղանի ձեռքերում է: Շահը ժամանակավոր է, իսկ մշակութային արժեքները՝ հավերժական: Ձեր առաքելությունը մշակութային արժեքները պահպանելն ու տարածելն է», ասաց մշակույթի փոխնախարար Դավիթ Սուրադյանը: Փառատոնի ընթացքում երիտասարդները կկազմակերպեն նաեւ արվեստներ, կայցելեն Սեւան, Դիլիջան, իսկ օգոստոսի 27-ին Մարիոթ հյուրանոցում տեղի կունենա փառատոնի փակման հանդիսավոր արարողությունն ու մրցանակների հանձնումը:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ծաղկաձոր-Երեւան

Ջավախյանը բավարարվեց բրոնզե մեդալով

Երեկ Պեկինի օլիմպիադայում բոնցֆամարտիկներն անցկացրին կիսաեզրափակիչ մենամարտերը: Հաղթողները մտնում էին եզրափակիչ, պարտվողներն արժանանում բրոնզե մեդալի: Բնականաբար, հայ մարզասերների ուշադրության կենտրոնում առաջին հերթին մեր օլիմպիական հավակնորդի 25 անդամներից պայքարը շարունակող միակ մասնակցի՝ Հրաչյա Ջավախյանի մենամարտն էր: 60 կգ քաշային կարգում Ջավախյանի մրցակիցը ռուսաստանցի Ալեքսեյ Տիշչենկոն էր:

Մենամարտը ցույց տվեց, որ Ջավախյանի մրցակիցն իրոք ուժեղ է: Առաջին երկու ռաունդներում Ջավախյանին հաջողվեց գրեթե հավասար պայքար մղել եւ մրցակցին զիջում էր մեկ միավորի տարբերությամբ: Սակայն հաջորդ երկու ռաունդներում Տիշչենկոն զարգացրեց հաջողությունը եւ մենամարտը շահելով 10-5 հաշվով, մտավ եզրափակիչ: Այսպիսով, Հրաչյա Ջավախյանը Հայաստանին 6-րդ բրոնզե մեդալը պարգեւեց: Իսկ Տիշչենկոյի մրցակիցը եզրափակիչում կլինի Ֆրանսիացի Դանտա Սոլը, որը 15-8 հաշվով հաղթեց կուբացի Ուգաս Բոնանդեսին: Վճռորոշ մենամարտը կկայանա վաղը:

Հայ բոնցֆամարտիկներից մինչ օրս միայն Վլադիմիր Ենգիբարյանին է հաջողվել օլիմպիական չեմպիոն դառնալ: Դա 1956-ին եղավ, Մելբուռնում: Իսկ 1976-ին, Մոնրեալում Դավիթ Թորոսյանը նվաճել էր բրոնզե մեդալ: Եվ ահա 32 տարի անց Հրաչյա Ջավախյանը կրկնեց Թորոսյանի ցուցանիշը:

Մինչեւ 51 կգ քաշային կարգում եզրափակիչում օլիմպիական խաղերի չեմպիոնի տիտղոսը կվիճարկեն կուբացի Անդրի Բոնանդեսն ու թայլանդցի Սոմչիտ Զոնգջոխորը: Կուբացին բավական հաճառ մրցայարում պարտության մատնեց ռուսաստանցի Գեորգի Բալակշինին (9-8), իսկ թայլանդցին 7-1 հաշվով հաղթեց իտալացի Վիչենցո Պիկարդիին: Մինչեւ 57 կգ քաշային կարգում առաջինը եզրափակիչ մտավ ուկրաինացի Վասիլի Լոմաչենկոն՝ հաղթելով թուրք Յակուտ Կիլիչին (10-1): Նրա մրցակիցը կլինի Ֆրանսիան ներկայացնող Զելյոհ Հեդաֆին: Վերջինս կիսաեզրափակիչում մրցում էր աղրբեջանցի Շահին Իմրանովի հետ, որը վնասվածքի պատճառով երկրորդ ռաունդում դադարեցրեց մենամարտը:

Մինչեւ 64 կգ բոնցֆամարտիկների մրցավեճում եզրափակիչի ուղեգիրը բաժին հասավ թայլանդցի Սանոա Բուդջումնոնգին ու Դոմինիկյան Հանրապետության ներկայացուցիչ Ֆելիքս Դիասին: Թայլանդցին 10-5 հաշվով հաղթեց կուբացի Ռոնյել Սոսլոնգոյին, իսկ Դիասն առավելության հասավ Ալեքսիս Վասիլին նկատմամբ (12-10): Մինչեւ 75 կգ քաշային կարգում չեմպիոնի տիտղոսը կվիճարկեն Զեյմս Դի Գեյլը (Մեծ Բրիտանիա) եւ կուբացի Էմիլիո Բայեկսը: Գեյլը 10-3 հաշվով պարտության մատնեց իռլանդացի Դարիեն Սազերլենդին, իսկ Բայեկսը հաղթեց հնդիկ բոնցֆամարտիկ Կումար Վիժեոդերին (8-5):

Ռուսաստանցի Ռահիմ Զահկիեւը եւ իտալացի Կլիմենտե Ռուսոն կդայարեն օլիմպիական ոսկե մեդալի համար մինչեւ 91 կգ քաշային կարգում: Ռուսաստանցի բոնցֆամարտիկը 10-5 հաշվով առավելության հասավ կուբացի Օսմայ Ակոստա Դուարտեի նկատմամբ (10-5), իսկ Ռուսոն պարտության մատնեց ամերիկացի Դեոնտեր Ռայլդերին (7-1):

«Բանանցը» կգլխավորի դանիացի Կիմ Սոլիդսբոլը

«Արարատի» հետ առաջնության առաջիկա խաղում «Բանանցը» խաղադաշտ դուրս կբերի նոր գլխավոր մարզիչ՝ դանիացի մասնագետ Կիմ Սոլիդսբոլը, որը կփոխարինի բուլղարացի Նեդելչո Մատուսեւիչին: Վերջինիս գլխավորությամբ «Բանանցն» անկայուն ելույթներ ունեցավ, խաղատակ պարտություններ կրեց ավստրիական «Զալցբուրգի» հետ ՈւԵՖԱ-ի գավաթի խաղարկության մրցաշրջանում՝ երկու խաղերի ընդհանուր արդյունքով 0-10 հաշվով զիջելով մրցակցին: Առաջնության վերջին 3 հանդիպումներում էլ «Բանանցը» 3 անընդմեջ պարտություն է կրել: Այնպես որ Մատուսեւիչի պաշտոնանկությունը սպասելի էր: Դա ընթացիկ առաջնության մասնակից թիմերում գլխավոր մարզչի առաջին 5-րդ փոփոխությունն է:

Ըստ տեղեկությունների, Սոլիդսբոլը երբեմն Դանիայի բարձրագույն խմբի թիմերին չի մարզել: Նրա վերջին աշխատանքի վայրը 2-րդ խմբի «Վեոլոս» է: 2001-2002-ին նա գլխավորել է Մալավայի ազգային հավաքականը՝ ՖԻՖԱ-ի դասակարգման աղյուսակում 120-րդ տեղից տեղափոխելով 96-րդ հորիզոնական: Սակայն 2002-ի դեկտեմբերին աֆրիկացիները հրաժարվեցին նրա ծառայություններից, քանի որ ֆեդերացիան ի վիճակի չէր Սոլիդսբոլին տարեկան կես միլիոն դոլար վճարել: Մինչ այդ աշխատավարձի մեծ մասը մարզչին վճարում էր աֆրիկյան երկրի կառավարությունը:

Սոլիդսբոլն օտարերկրացի 5-րդ մարզիչն է, որ սանձնում է «Բանանցի» դեկը: Օտարերկրացի մասնագետների հրավիրելու ավանդույթը «Բանանցում» սկսվել է 2006-ից: Այդ տարի թիմն առաջնությանը նախապատրաստվեց եւ հանդես եկավ ռուսաստանցի մարզիչ Նիկոլայ Կիսելյովի գլխավորությամբ: «Բանանցն» առաջնությունում գրավեց 2-րդ տեղը: Սակայն ակումբի ղեկավարությունը դժգոհ էր Կիսելյովի գործունեությունից եւ որոշեց հրաժարվել նրա ծառայություններից: 2007-ի մրցաշրջանը «Բանանցը» դիմավորեց չեխ մարզիչ Յան Պոտուչկայի գլխավորությամբ, որը նախկինում դարպասպահ էր եղել: Թեեւ նրա օրոք «Բանանցը» նվաճեց հանրապետության գավաթը, սակայն ակումբի ղեկավարությունը կրկին դժգոհ մնաց մարզչից: Ի վերջո, առաջնության 16-րդ տուրից հետո Պոտուչկան պաշտոնանկ արվեց: Նրա գլխավորությամբ թիմը տոնել էր 8 հաղթանակ, 4-ական խաղ ավարտել էր ոչ-ոքի ու պարտվել: 18-րդ տուրից թիմի ղեկը սանձնեց Նիկոլայ Կոստովը: Բուլղարացի մարզչի նորամուծը ընս տրավորիչ էր: Առաջին իսկ խաղում «Բանանցը» 6-0 խոշոր հաշվով հաղթեց «Արարատին», ապա հաղթանակով ավարտեց նաեւ հաջորդ 5 հանդիպումները: Ընդհանուր առմամբ Կոստովի օրոք «Բանանցը» տոնեց 8 հաղթանակ, 3-ում պարտվեց եւ գրավեց 2-րդ տեղը: Այս անգամ «Բանանցի» ղեկավարությունը գոհ էր մարզչից՝ նրան հաստատելով բարձրակարգ մասնագետ:

2008-ի սկզբին Կոստովին հրավիրեցին Դոնեցկի «Մետալուրգ», որի գլխավորությամբ թիմը ոչ միայն պահպանեց տեղն Ուկրաինայի բարձրագույն խմբի առաջնությունում, այլեւ հաջող է հանդես գալիս ընթացիկ մրցաշրջանում: Իսկ «Բանանցի» ղեկը սիրողած էին վստահել Կոստովի օգնականին՝ Նեդելչո Մատուսեւիչին: Թե ինչպիսի ճակատագիր է սպասում դանիացի Կիմ Սոլիդսբոլին «Բանանցում», ցույց կտա ժամանակը:

Ովացերը լավագույնն է

Տղամարդկանց 50 կմ մարզական քայլի օլիմպիական չեմպիոն հռչակվեց իտալացի Ալեխս Ովացերը: Նա մրցասարաթությունը հաղթահարեց 3 ժամ 37 րոպե 9 վրկ-ում: Երկրորդ մրցասարաթությունը հաղթահարեց ավստրալացի Ջարեդ Տալենտը (3:39:27): Բրոնզե մեդալակիր դարձավ ռուսաստանցի Դենիս Նիժեգորոդովը (3:40:14):

Խաղը հետաձգվել է

Ֆուտբոլի ՀՀ առաջնության 17-րդ տուրի «Փյունիկ»-«Շիրակ» հանդիպումը օգոստոսի 23-ից տեղափոխվել է 25-ին: Պատճառն այն է, որ «Փյունիկի» մի խումբ ֆուտբոլիստներ մասնակցեցին Հայաստան-Թուրքիա երիտասարդական հավաքականների հանդիպմանը:

Սուպերգավաթը կխաղարկվի սեպտեմբերի 24-ին

2007-ի մրցաշրջանի չեմպիոն «Փյունիկն» ու գավաթակիր «Բանանցը» սեպտեմբերի 24-ին կվիճարկեն Հակոբ Տոնոյանի անվան Սուպերգավաթը: Խաղը տեղի կունենա «Հրազդան» մարզադաշտում ժամը 19-ին:

Մոիսեեւը կրկնեց հաջողությունը

Ռուսաստանցի Անդրեյ Մոիսեեւը դարձավ ժամանակակից հնգամարտի օլիմպիական կրկնակի չեմպիոն: Ամեն ինչ վճռվեց վերջին մրցաձեւում՝ 3000 մ կրոսավազքում: Թեեւ Մոիսեեւը ցույց տվեց միայն 27-րդ արդյունքը, սակայն դա էլ բավարար էր ընդհանուր հաշվարկով հաղթող ճանաչվելու համար: Նա վաստակեց 5632 միավոր: Արծաթե եւ բրոնզե մեդալները բաժին հասան լիտվացիներ Էդմինաս Կուսնգոլկասին (5548) եւ Անդրեյս Զադնեպրովսկիսին (5524):

ԵՐՐՈՐԴ

Նարդու նոր տարատեսակ՝ եռանարդի

Նարդին սիրված ու մեծ մասսայականություն վայելող խաղ է Հայաստանում: Այն նաեւ մարզանձ է, որից միջազգային մրցաշարեր ու աշխարհի առաջնություններ են անցկացվում: Ճիշտ է, միջազգային նարդին որոշ չափով իր կանոններով տարբերվում է սովորականից:

Երեկ «Տեսակետ» ակումբում լրագրողներին ներկայացվեց նարդու նոր տարատեսակը՝ եռանարդին: Գյուտի հեղինակը Ներսես Ներսիսյանն է: Գյուտը գրանցվել է 2006-ին: Եռանարդու առանձնահատկություններին ծանոթացրին Ներսես Ներսիսյանն ու 2002-ի նարդու աշխարհի թիմային առաջնության հաղթող խաչիկ Մելիքյանը: Եռանարդին նախատեսված է երեք խաղացողի համար: Նարդու խաղատախտակն ունի վեցանկյան տեսք, բաժանված է երեք հավասար հատվածների՝ նախատեսված յուրաքանչյուր խաղացողի համար: Ի տարբերություն սովորական նարդու, եռանարդու մրցավեճը երեք մասնակիցների միջեւ ավելի հետաքրքրական ու թեժ է ընթանում (դրանում համոզվեցինք ասուլիսից հետո եռանարդի խաղալիս): Գործում են որոշակի կանոններ, որոնք տարբերվում են սովորական նարդուց:

Գյուտի հեղինակը համոզված է, որ եռանարդին մեծ հետաքրքրություն կառաջացնի բնակչության երգնում: Դրան կնպաստի նաեւ օգոստոսի 24-ին Գառնիում անցկացվելիք առաջնությունը, որն արդեն 2-րդն է: Եռանարդու անդրանիկ առաջնությունը անցկացվել է անցյալ տարի, կրկին Գառնիում: Բնական է, որ նոր մրցաձեւի մասսայականացման համար առաջին հերթին անհրաժեշտ են եռանարդու խաղատախտակներ: Ներսես Ներսիսյանը տեղեկացրեց, որ դրանց պատրաստման իրավունքը իրենց է պատկանում եւ պահանջարկի դեպքում համապատասխան ձեռնարկության հետ պայմանագիր կկնքվի խաղատախտակների արտադրության վերաբերյալ:

Հանդիպման մասնակիցներն անդրադարձան նաեւ հայ նարդիստների ելույթներին: Մեր նարդիստներն ամեն տարի մասնակցում են միջազգային մրցաշարերի, Մոնտե Կառլոյում անցկացվող նարդու աշխարհի առաջնությանը, որտեղից վերադառնում են մրցանակներով: Սեպտեմբերի 20-26-ը նրանք կմասնակցեն Եգիպտոսում, իսկ նոյեմբերին՝ Ֆրանսիայում կայանալիք միջազգային մրցաշարերին: Ըստ բանախոսների, հայ նարդիստները բավական բարձր որակավորում ունեն: Պարզապես առայժմ ֆինանսական դժվարություններ կան մրցումների մեկնելու համար գումարներ հայթայթելու գործում, թեեւ այդ հարցում հովանավորներն աջակցում են:

Կրկին պարտություն

Լիտվայի Պալանգա քաղաքում անցկացվող մինչեւ 17 տարեկանների ֆուտբոլի մրցաշարում Հայաստանի հավաքականը 2-րդ պարտությունը կրեց՝ 0-4 հաշվով զիջելով մոլդովացիներին: Առդեմ 3-րդ րոպեին մոլդովացիները 11 մ հարվածով բացեցին հաշիվը եւ մինչեւ ընդմիջում եւս 2 գոլ խփեցին: Երկրորդ խաղակեսի սկզբին դաշտից հեռացվեց մեր հավաքականի դարպասպահ Տիգրան Դավթյանը: Մինչեւ խաղավերջ մոլդովացիները եւս մեկ գոլ խփեցին: Առաջին խմբի մյուս խաղում ռուսները 9 անպատասխան գոլակ խփեցին Լիտվայի 2-րդ հավաքականի դարպասը:

Երկրորդ խմբում Ադրբեջանի հավաքականը 1-0 հաշվով հաղթեց լիտվացիներին, իսկ Լատվիա-Բելառուս խաղում գրանցվեց ոչ-ոքի (1-1):

Ամերիկյան զույգն ուժեղագույնն էր

Հայտնի դարձան լողափային վոլեյբոլի տղամարդկանց մրցաշարի մրցանակակիրները: Եզրափակիչում մրցեցին Բրազիլիայի եւ ԱՄՆ-ի ներկայացուցիչները: Առաջին խաղափուլն ավարտվեց բրազիլացիներ Մարսիո Արաուջոյի եւ Ֆաբիո Լուսի պարտությամբ (21-23): Երկրորդ խաղափուլում նրանց հաջողվեց առավելության հասնել ամերիկացիներ Թոդ Ռոջերսի ու Ֆիլիպ Դալխուսերի նկատմամբ (21-17) ու հավասարեցնել հաշիվը: Սակայն վճռորոշ խաղափուլը շահեցին ամերիկացիները (15-4) եւ դարձան օլիմպիական չեմպիոններ:

Բրոնզե մեդալին արժանացավ բրազիլական մյուս երկյակը՝ Ռիկարդո Սանտոսն ու Էմանուել Ռեգոն, որոնք 2-0 հաշվով պարտության մատնեցին Ռենատո Գուսմանն ու Ժորժ Տերսյոյին:

Բրազիլուհիներին էլ չհաջողվեց չեմպիոն դառնալ

Ֆուտբոլի Բրազիլիայի կանանց հավաքականին էլ չհաջողվեց օլիմպիական չեմպիոն դառնալ: Բրազիլացիները հաճառ մրցայարում, լրացուցիչ ժամանակում 0-1 հաշվով զիջեցին ԱՄՆ-ի հավաքականին: Միակ գոլը 96-րդ րոպեին խփեց Լլոյդը: Ի տարբերություն տղամարդկանց ֆուտբոլի, կանանց մրցաշարում տարիքային սահմանափակում չկա եւ օլիմպիադայում հավաքականները հանդես էին գալիս ուժեղագույն կազմերով: Ամենափորձառուն Գերմանիայի ընտրանին է, որը բավարարվեց բրոնզե մեդալով՝ 2-0 հաշվով հաղթելով ճապոնացիներին:

Մեդալները վերաբաշխվեցին

Անթիլյան կղզիների արագավազորդ Ջոտանի Մարտինան 200 մ վազքի ընթացքում ուրիշի վազքուղյակ ներխուժելու համար որակազրկվել է եւ զրկվել արծաթե մեդալից: Մինչ այդ նման արարքի համար որակազրկվել էր ամերիկացի Ռուլես Սմիրմոնը, որը գրավել էր 3-րդ տեղը: Այսպիսով, արծաթե մեդալը կհանձնվի ամերիկացի Շոն Կրոուֆորդին, իսկ բրոնզե պարգեւը՝ նրա հայրենակից Ռոլեսթ Դիկսին:

Որակազրկում մրցակցին կծելու համար

81 կգ քաշային տաղիկ բոնցֆամարտիկ Ջախոն Կուրբանովը խոշոր եզրափակիչ մենամարտում դադախ երեքբուլան Շինալիեւի ուսը կծելու համար որակազրկվել է: Դեպքը տեղի է ունեցել 3-րդ ռաունդի վերջում: Այդ ոչ մարզական արարքը սպիտեց մրցավարին դադարեցնելու մենամարտը: Այդ պահին դադախ բոնցֆամարտիկը հաղթում էր 12-6 հաշվով:

Հետաքրքրական է, որ մարզասրահում այդ մենամարտին հետեւում էր նաեւ պրոֆեսիոնալ բոնցֆամարտի ափսարի նախկին չեմպիոն Էվանդեր Հոլիֆիլդը, որը 1997-ի հունիսին իր վրա զգացել էր Մայք Թայսոնի ատամների հզորությունը: Հիշեցնենք, որ այդ ժամանակ Թայսոնը կծել էր Էվանդերի ականջը:

Էջը պատրաստեց ԱՐՈՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒՅԹԻ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈՒԿԿ-ն (ղեկավար՝ ՊԳԳ - ՍԲԾՁԲ - 08/5 ծանկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ՝ **Երևանի քաղաքապետարանի «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈՒԿԿ-ի կարիքների համար շինարարական ապահովագրության տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 650 ՀՀ դրամ փոխանցել «Առբանկ-վեստբանկ», «Բեթ-գազ» ՍՊԸ -ի 247230066158 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 ապահովագրային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք.Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ. 28-93-25, հանձնաժողովի քարտուղար՝ Կ. Դոնբալյանին:

Հրավերն անձին տվող է անձը հասանող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ մրցակցային բանակցությունների հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ ապահովագրային օր, ժամը 14.20-ն:

***

«Պետական գնումների գործակալություն» ՊՈՒԿԿ-ն (ղեկավար՝ ՊԳԳ-ՍԲԾՁԲ-08/64 ծանկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ՝ **«Երեւանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական ոչ առեւտրային կազմակերպության կարիքների համար Ֆերացի փողոցից մինչեւ Խորենացի շրջանային կատեգորիայի մայրուղու (Ֆերացի փողոցի վրա գտնվող երկաթգծի կամրջից մինչեւ Խորենացի փողոց չհասնող երկաթգծի ղեկավարով) կառուցման ապահովագրությունների ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 19950.0 ՀՀ դրամ փոխանցել «Առբանկ-վեստբանկ» ՓԲԸ «Կոմունալախնայողական» ՓԲԸ N 247010010343 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 ապահովագրային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք.Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ. 28-93-25, հանձնաժողովի քարտուղար Գ.Հովհաննիսյանին:

Հրավերն անձին տվող է անձը հասանող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ մրցակցային բանակցությունների հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ ապահովագրային օր, ժամը 10.00-ն:

***

«Պետական գնումների գործակալություն» ՊՈՒԿԿ-ն (ղեկավար՝ ՊԳԳ-ՍԲԾՁԲ-08/65 ծանկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ՝ **«Երեւանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական ոչ առեւտրային կազմակերպության կարիքների համար «Ֆերացի-Սարալանջ, Ա-վետիսյան փողոցները միացնող նոր մայրուղու» եւ Ֆերացի-Խորենացի փողոցները միացնող ճանապարհի կառուցման ապահովագրների ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 18625 ՀՀ դրամ փոխանցել «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, «Հայբիզնեսինվեստ ինստիտուտ» ՓԲԸ-ի N 1150000088680300 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 ապահովագրային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք.Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ. 28-93-25, հանձնաժողովի քարտուղար Գ. Մարկոսյան:

Հրավերն անձին տվող է անձը հասանող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ մրցակցային բանակցությունների հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ ապահովագրային օր, ժամը 11.00-ն:

***

«Պետական գնումների գործակալություն» ՊՈՒԿԿ-ն (ղեկավար՝ ՊԳԳ-ՍԲԾՁԲ-08/66 ծանկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ՝ **«Երեւանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական ոչ առեւտրային կազմակերպության կարիքների համար Ֆերացի-Կորյուն-Նալբանդյան-Ցարենց փողոցների հատման տրանսպորտային հանգույց արբեր մայրուղիների վրա (հանգույցի փողոցի կամը Ֆերացի փողոցի Գեղարդի հունի վերակառուցմամբ) վերակառուցման ապահովագրների ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 16015 ՀՀ դրամ փոխանցել «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, «Հայբիզնեսինվեստ ինստիտուտ» ՓԲԸ-ի N 1150000088680300 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 ապահովագրային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք.Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ. 28-93-25, հանձնաժողովի քարտուղար Զ. Մելիքյան:

Հրավերն անձին տվող է անձը հասանող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ գնանշման հարցման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ ապահովագրային օր, ժամը 12.00-ն:

***

«Պետական գնումների գործակալություն» ՊՈՒԿԿ-ն (ղեկավար՝ ՊԳԳ-ՍԲԾՁԲ-08/67 ծանկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ՝ **ՀՀ Սյունիքի մարզպետարանի կարիքների համար ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի թիվ 2 միջնակարգ դպրոցի հիմնանորոգման ապահովագրների ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 1600.0 ՀՀ դրամ փոխանցել «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, «Հայբիզնեսինվեստ ինստիտուտ» ՓԲԸ-ի N 1150000088680300 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 ապահովագրային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք.Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ. 28-93-25, հանձնաժողովի քարտուղար Գ.Հովհաննիսյանին:

Հրավերն անձին տվող է անձը հասանող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ մրցակցային բանակցությունների հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ ապահովագրային օր, ժամը 14.30-ն:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈՒԿԿ-ն (ղեկավար՝ ՊԳԳ-ԳՀԱՇՁԲ-08/40՝ ծանկագրով կազմակերպում է գնանշման հարցում՝ **ՀՀ կրթության եւ գիտության նախարարության կարիքների համար գույքի արտադրության ապահովագրների ձեռքբերման նպատակով:**

Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 700 ՀՀ դրամ փոխանցել «Առբանկ-վեստբանկ» «Բեթ-գազ» ՍՊԸ-ի 247230066158 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 ապահովագրային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք.Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ. 28-93-25, հանձնաժողովի քարտուղար Կարեն Դոնբալյան:

Հրավերն անձին տվող է անձը հասանող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ գնանշման հարցման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ ապահովագրային օր, ժամը 11.00:

***

«Պետական գնումների գործակալություն» ՊՈՒԿԿ-ն (ղեկավար՝ «ՊԳԳ-ԳՀԱՊՁԲ-08/45» ծանկագրով կազմակերպում է գնանշման հարցում՝ **«Պետության կարիքների համար անհրաժեշտ կոտիկի եւ հանդերձանքի ձեռքբերման» գնման ոլորտագիր կնքելու նպատակով:** Գնանշման հարցման հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 650 ՀՀ դրամ փոխանցել «Առբանկ-վեստբանկ», ՀՀ 247230066158 «Բեթ-Գազ» ՍՊԸ -ի հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 ապահովագրային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք.Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ.՝ 28-93-25, հանձնաժողովի քարտուղար Բուռնուչյանին:

Հրավերն անձին տվող է անձը հասանող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ գնանշման հարցման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ ապահովագրային օր, ժամը 17:00:

***

«Պետական գնումների գործակալություն» ՊՈՒԿԿ-ն (ղեկավար՝ «ՊԳԳ-ԳՀԱՊՁԲ-08/39» ծանկագրով կազմակերպում է գնանշման հարցում՝ «Պետության կարիքների համար անհրաժեշտ սարքավորումների հավաքածուի ձեռքբերման» գնման ոլորտագիր կնքելու նպատակով: Գնանշման հարցման հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 700 ՀՀ դրամ փոխանցել «Առբանկ-վեստբանկ», ՀՀ 247230066158 «Բեթ-Գազ» ՍՊԸ -ի հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 ապահովագրային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք.Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ.՝ 28-93-25, հանձնաժողովի քարտուղար Բուռնուչյանին:

Հրավերն անձին տվող է անձը հասանող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ գնանշման հարցման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ ապահովագրային օրվա ընթացքում 11:30:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ВНИМАНИЕ!

ВТБ

ՎՏԲ-Հայաստան բանկ ՓԲԸ տեղեկացնում է թիվ 1 մասնաճյուղի գործունեության վայրի փոփոխության մասին:
Թիվ 1 մասնաճյուղի նոր հասցեն՝ Երեւան, Երվանդ Քոչարի 19/3:
Հեռ.՝ 57-18-36

ЗАО "Банк ВТБ (Армения)" сообщает об изменении адреса деятельности филиала N 1.
Новый адрес филиала N 1: г. Ереван, ул. Ерванда Кочара, дом 19/3.
Тел. 57-18-36

UNDP

REQUEST FOR PROPOSALS FOR BANKING SERVICES

The United Nations requests proposals for banking services for the benefit of the United Nations Organization in Armenia

- Eligible firms may collect the RFP and related documents from 25 August 2008 to 30 September 2008, 9:30 – 11:30 a.m., at 14 Petros Adamyan Str., UNDP Finance Unit, Tel: 566073, ext. 124.
- The RFP is only open to Banks that are registered members of SWIFT. Prospective Banks are required to provide their SWIFT number when collecting the RFP;
- A Pre-Bid Conference will take place on Tuesday, 16 September 2008 at 16:00 hrs in the UN Conference Room, UN House/UNDP at 14 P. Adamyan Street.
- Proposals in accordance with RFP must be received no later than 17:00 hrs on Tuesday, 30 September 2008;
- Proposals will be evaluated in accordance with internationally accepted practices. In particular, they will be evaluated on their responsiveness to implementing the requisite banking services;
- The UN reserves the right to accept or reject, in part or whole, any or all of the proposals at any time without assigning any reason whatsoever;
- The costs of preparing the proposals and of negotiating the contract are not reimbursable by the UN;
- Proposals must be valid for 120 days from the deadline for submission. The UN will make its best effort to select a firm within this period;
- The UN does not bind itself in any way to select the firm offering the lowest prices.

Լրագրողական մրցույթ դպրոցականների համար

UNICEF-ը եւ «Ազգ» օրաթերթը 10-16 տարեկան դպրոցականների համար հայտարարում են շարադրության մրցույթ՝ **«Ինչ եմ ուզում ես»** կամ **«ԻՆՉ ԵՆ ՈՒԶՈՒՄ ԵՐԵԽԱՆԵՐԸ»** վերնագրով: Հաղթողներն անվճար կմասնակցեն **«Ժուռնալիստիկայի հիմունքներ եւ վարպետություն»** դասընթացին, կտպագրվեն «Մանկապատանեկան Ազգ» հավելվածում: Աշխատանքները **մինչեւ օգոստոսի** 31-ը կարող եք ուղարկել **susmark2002@yahoo.com** էլ. հասցեին կամ բերել խմբագրություն: Հասցե՝ Հանրապետության 47: Հեռախոս՝ (093) 369531:

Հետաքրքիր հասցեն եւ հեռախոսահամարի առկայությունը պարտադիր են:

Մրցույթի մանրամասներին կարող եք ծանոթանալ **www.azg.am** կայքէջում տեղադրված հայտարարության ծավալուն տարբերակից:

Մարերի գաղտնը մեկ գավաթի մեջ

ՍԱՐԻ ԹԵՅ

ՈՒՐՑԻ ԵՎ ԴԱՂՑԻ ԸՆՏԻՐ ԹԵՅ

25 փաթեթ մեկ տուփի մեջ
և ընդամենը 1-2 ռուբլով կարող եք վայելել ընտիր որսի ուրցի թեյ

ՍԱՐԻ ԹԵՅ MOUNTAIN TEA

առնվազն ամիսը մեկ արժե ընտրել բարձրորակը

Մեծածախ գնումների համար զանգահարել 47-27-20, 47-03-63

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ քրային օրենսդրության կատարմանն ուղղակցության կոմիտեն, ՀՀ քրային օրենսգիրքի եւ ՀՀ կատարողական օրենսգրքի 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների դատավճիռների հանձնման, ծանուցվում է ՀՀ Արարատի մարզի Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող «Եկոտեքս» ՓԲԸ-ի որոշման նպատակով սարքերկրա քրային օբյեկտից 20.0 կՎտ քրան բացատրության նպատակներ:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ նախագծի նախնական տարբերակին, կարող են ազատանալին օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ քրային օբյեկտների կատարմանն ուղղակցությունն (հասցեն՝ Կատարողական 3-ր տուն, 5-ր հարկ, 541 սենյակ):

Հասարակությունից կոմիտեի փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2008 թ. օգոստոսի 28-ին, ժամը 18-ին Կատարողական 3-ր տուն, 5-ր հարկ, 541 սենյակ:

ՀՀ քրային օբյեկտների կատարմանն ուղղակցություն

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ՀԵՌԱԽՈՍԵՔ՝ 58-29-60

Լուսանկարները՝ Արմենպրեսի: Լուսանկարները՝ «Ազգ» օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայական համար՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արամի 2: